

NORWEGIAN  
HELSINKI COMMITTEE




# Չ Ե Կ ՈՒ Յ Ց

2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2017թ.-ի հունիսի 30-ն ընկած  
ժամանակահատվածում տեղի ունեցած՝ սեռական  
կողմնորոշմամբ և գենդերային ինքնությանբ պայմանավորված  
մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ

---

Հայաստան, Երևան 2017

---



NORWEGIAN  
HELSINKI COMMITTEE



# Չ Ե Կ ՈՒ Յ Ց

**2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2017թ.-ի հունիսի 30-ն ընկած  
ժամանակահատվածում տեղի ունեցած՝ սեռական  
կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված  
մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ**

---

Սույն զեկույցը կազմվել է Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում: Սույն բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությանը և հնարավոր է, որ չհամընկնեն Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի տեսակետների հետ:

## Բովանդակություն

Նախաբան	4
Չեկույցում գործածվող հիմնական հասկացություններն ու հապավումները	6
«Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի» միջազգային օր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կոչը	7
Բացասական արձագանքներ	11
Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված քննարկում «Մեդիա կենտրոն»-ում	13
Ֆեյսբուքյան տիրույթում ակտիվ գրառումներ	22
Ատելության խոսքի, խտրականության և բռնության դրսևորումների այլ դեպքեր	28
Ատելության խոսքի, խտրականության և բռնության դրսևորումների այլ դեպքեր	30
Սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված մարդու իրավունքների խախտման դեպքեր	43
Տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների քանակական ցուցանիշները	43
Իրավաբանական խորհրդատվությունների առավել ուշագրավ գործերը	44
Սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված մարդու իրավունքների խախտման դեպքեր	47
Տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների քանակական ցուցանիշները	47
Իրավաբանական խորհրդատվությունների շրջանակներում առավել ուշագրավ գործեր	48
Սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված խտրականության հարցերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները	55
Ամփոփում	57

## Նախաբան

Հայաստանում խտրականության և ատելության կոչերը, անձանց ֆիզիկական և հոգեբանական շարունակական հետապնդումները, ինչպես նաև այդ առնչությամբ դատական համակարգի ոչ պատշաճ արձագանքը ոչ միայն անթույլատրելի են, այլև խարխուլում են պետության ժողովրդավարության և արդարադատության հիմքերը:

Երբեմն խտրականության ենթարկված անձինք զրկվում են իրավական պաշտպանությունից օգտվելու իրավունքից: ՀՀ օրենսդրությամբ հստակ չի սահմանվում խտրականության արգելքը բոլոր հիմքերով և հետևաբար բացակայում է այդ հիմքով իրավասու մարմիններին դիմելու հնարավորությունը:

Շատ հաճախ խտրականության հիմքով բռնության ենթարկված անձիք՝ չունենալով այլընտրանքային տարբերակ, տալիս են հանցագործության մասին հաղորդում, հիմնականում՝ դիտավորությամբ առողջությանը ծանր, միջին ծանրության, թեթև վնաս պատճառելու, ծեծի, ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու հատկանիշներով: Սակայն այս հանցագործությունների հանցակազմերը խտրականության հատկանիշներ չեն պարունակում:

Հասարակության մեջ առավել խոցելի խմբերի ներկայացուցիչների նկատմամբ խտրականությունը հաճախ դրսևորվում է ոչ միայն ֆիզիկական բռնությունների, այլև անհանդուրժող վերաբերմունքի և ատելության կոչերի միջոցով:

Այս մասով ևս ՀՀ օրենսդրությունը չի սահմանել համապատասխան երաշխիքներ՝ ատելության կոչերի դրսևորման դեպքում իրավական պաշտպանություն ստանալու համար:

Քանի որ ատելության խոսքը շատ հաճախ չի պարունակում հանցագործության հատկանիշներ, միակ արդյունավետ կառուցակարգը, որից հնարավոր է օգտվել, դա վիրավորանքի և զրպարտության իրավական պաշտպանության քաղաքացիաիրավական կառուցակարգն է:

Սակայն վիրավորանքի և զրպարտության հասկացություններն ամբողջությամբ չեն արտացոլում ատելության խոսքի առանձնահատկությունները, ինչն իր բնույթով հանրային վտանգավորության առավել բարձր աստիճան է ենթադրում:

Այսպիսով, խտրականությունը վերացնելու առաջնահերթ նախապայման է հանդիսանում օրենսդրական բարեփոխումներ կատարելն ու տեղեկատվական և հանրային իրազեկման մակարդակը բարձրացնելը:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն՝ սույն զեկույցով անդրադարձել է 2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2017թ.-ի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում տեղի

ունեցած սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված մարդու իրավունքների խախտման դեպքերին:

Խտրականության ու մարդու իրավունքների խախտման դեպքերի առավել ակտիվ շրջան է գրանցվել 2017թ.-ի մայիսի 17-ին Նախորդող և հաջորդող մոտակա օրերին՝ պայմանավորված՝ այդ օրը ՀՀ-ում նշվող «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի» միջազգային օրվան նվիրված միջոցառումներով:

## Չեկույցում գործածվող հիմնական հասկացություններն ու հապավումները

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՆՍՀԿ	«Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՉԼՄ	Չանգվածային լրատվության միջոց
ԹՆՕ	Թմրամիջոցների ներարկային օգտագործող
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ԼԳԲՏԻԶ+	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս*, ինտերսեքս, քուիր,+
ԿՍԿ	Կոմերցիոն սեռական ծառայություններ մատուցող կին
ՍԿԳԻ	Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
Նույնասեռական	Անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձանց նկատմամբ:
Հագուստափոխ	Այլ կերպ նաև քրոս-դրեսսեր: Մարդիկ՝ ովքեր կրելով հակառակ սեռի հագուստ, պարագաներ ստանում են հակառակ սեռի կերպար և որոշակի ժամանակահատվածով ապրում են որպես հակառակ սեռի ներկայացուցիչ:
Բիսեքսուալ	Անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի գենդերների նկատմամբ:



## **Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր**

### **«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կոչը**

Հայաստանում լայն տարածում ունեն **ԼԳԲՏԻԶ+** անձանց իրավունքների և ազատությունների անհիմն խախտումները և սահմանափակումները, որոնք լուրջ վտանգ են առաջացնում ՀՀ-ում իրավական կարգերի հաստատման, իրավահավասարության, օրենքի նկատմամբ իրավունքի գերակայության համար:

Թեև Հայաստանի Հանրապետությունը քայլեր է ձեռնարկում երկրում իշխանության տարբեր ճյուղերի կողմից իրականացվող գործունեության նկատմամբ վստահության շեմը բարձրացնելու համար, սակայն խտրականության ենթարկված անձանց իրավունքների սահմանափակումները շարունակում են կրել համատարած բնույթ, դեպքերը՝ ամբողջովին չբացահայտված, իսկ մեղավորները՝ չպատժված:

Նմանատիպ դեպքերը միանշանակ հանգեցնում են իրավական կարգի, այդ թվում՝ **ԼԳԲՏԻԶ+** անձանց նկատմամբ հարգանքի խաթարմանը, անպատժելիության մթնոլորտի ձևավորմանն ու տարածմանը:

Բազմաթիվ հասարակական կազմակերպությունների կողմից քայլեր են ձեռնարկվում իրավիճակը բարելավելու և մարդկանց իրավունքների նկատմամբ հարգանք սերմանելու ուղղությամբ, սակայն այդ ջանքերը շատ հաճախ բախվում են հասարակական կարծրատիպերին, ինչպես նաև պետական մարմինների կողմից ստեղծված խոչընդոտներին և անցնում ապարդյուն:

**«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն պաշտոնապես դատապարտում է բռնության ցանկացած դեպք **ԼԳԲՏԻԶ+** անձանց նկատմամբ, մասնավորապես՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով, կոչ է անում լինել հանդուրժող և հարգալից վերաբերմունք ցուցաբերել հասարակության բոլոր ներկայացուցիչների նկատմամբ:**

*«Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը կոչ է անում իրավասու մարմիններին, մասնավորապես՝*

### **ՀՀ պետական մարմիններին.**

Հայաստանի Հանրապետությունը ամրագրված է որպես ժողովրդավար, իրավական պետություն, որտեղ ՀՀ Սահմանադրությունը և մյուս բոլոր օրենքները պետք է ապահովեն քաղաքացիների արժանապատիվ և իրավահավասար կյանքի բնականոն ընթացքը: Այս ամրագրված գաղափարը իրականություն դարձնելու և ժողովրդավար

պետությունն ոչ միայն կոչվելու, այլև լինելու համար անհրաժեշտ է, որ պետությունը՝ կառավարման իր բոլոր օղակներով, բացառելով խտրական վերաբերմունքի դրսևորումները, նպաստի հանդուրժող, ժողովրդավար արժեքներ կրող հասարակության ձևավորմանը, որը ժողովրդավար պետության հիմնաքարերից է:

### **ՀՀ Ազգային ժողովին.**

Ընդունել խտրականությունն արգելող օրենք, որը կանխարգելիչ դեր կստանձնի հանրային բոլոր ոլորտներում, որևէ հիմքով խտրականության դրսևորումների համար՝ չբացառելով և անպայմանորեն ներառելով սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես պաշտպանված հիմքեր տվյալ օրենքում:

Ընդունել ատելության խոսքի, բռնությունների և անհանդուրժողականության քարոզչությունն արգելող օրենսդրություն:

ՀՀ Քրեական օրենսգրքում ատելությամբ պայմանավորված հանցագործությունների հիմք ներառել նաև սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:

### **ՀՀ ՏԻՄ–երին.**

ՀՀ յուրաքանչյուր ոլորտի վերաբերող քաղաքականություն իրականացնելիս բացառել որևէ հիմքով խտրական վերաբերմունքի դրսևորումը:

Առողջապահական, կրթական, մշակութային, սոցիալական, աշխատանքի իրավունքի և այլ հանրային կարևոր ոլորտներում գործընթացներ իրականացնելիս ապահովել իրավահավասար պայմաններ ՀՀ քաղաքացիների համար՝ ներառելով հանրային բոլոր խոցելի խմբերն, այդ թվում LQFSH անձանց:

### **ՀՀ Առողջապահության նախարարությանը.**

Վերահսկել սեռական կողմնորոշման հիմքով խտրական վերաբերմունքի դրսևորումը քաղաքացիների նկատմամբ՝ բժշկական ծառայություններ մատուցելիս նախարարությանը ենթակա կառույցներում:

### **ՉԼՄ – ներին.**

Չերժ մնալ հանրության փոքրամասնությունն ներկայացնող խմբերի, այդ թվում նաև LQFSHՔ համայնքի նկատմամբ ատելության խոսքի տարածման, անհանդուրժողականության, խտրական վերաբերմունքի քարոզչական գործընթացների մասն դառնալուց:

Տեղեկատվություն հրապարակելիս պահպանել լրագրողական էթիկայի կանոնները:



Բարձրացնել ոլորտի ներկայացուցիչների տեղեկացվածությունը **ԼԳԲՏԻՔ** հիմնախնդիրների վերաբերյալ՝ օբյեկտիվ և իրականությանը համապատասխանող տեղեկատվություն ներկայացնելու համար:

Չնպաստել հանրային՝ խտրականություն սերմանող գենդերային կարծրատիպերի տարածմանը:

Ազդել հանդուրժող հասարակական կարծիքի ձևավորման գործընթացին՝ նպաստելով **ՀՀ**-ում քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու ժողովրդավարության կայացմանը:

### **ՀՀ Կրթության և գիտության հարցերի նախարարությանը.**

Բարձրացնել սեռական դաստիարակության կարևորությունն ու այն դասավանդողների կոմպետենտությունը **ՀՀ** կրթօջախներում:

Արդիականացնել մասնագիտական կրթությունը բժշկական կրթական հաստատություններում՝ բարձրացնելով **ՀՀ**-ում ոլորտի մասնագետների, այդ թվում՝ սեքսուոլոգների կոմպետենտությունը:

### **Ուժային կառույցներին /Ոստիկանություն, ՊՆ, ԶԿՀ/.**

Նպաստել **ՀՀ** իրավական երկրի կայացմանը՝ բացառելով խտրական վերաբերմունքն ու բռնությունները **ՀՀ** ուժային կառույցներում **ԼԳԲՏԻ** անձանց նկատմամբ: Վերահսկել և բացառել **ՀՀ** քաղաքացիների նկատմամբ խոշտանգումները, բռնությունները, խտրականության այլ դրսևորումները ուժային կառույցներում:

### **Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին.**

Բարձրացնել հանրային տեղեկացվածությունը խտրականության և դրանից բխող բացասական հետևանքների մասին:

Բարձրացնել հանրային տեղեկացվածությունը, խտրականության հիմքով՝ մարդու իրավունքների ոտնահարման, գենդերային կարծրատիպերի, անհանդուրժողականության, ատելության խոսքի, բռնության քարոզչության հակաիրավական դրսևորումների վերաբերյալ:

Նպաստել խտրականության վերաբերյալ օրենքի ընդունմանը:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից լուսաբանվել է նաև [aravot.am](http://aravot.am) պաշտոնական կայքի, ինչպես նաև «Առավոտ» ֆեյսբուքյան էջի կողմից:

Առավոտ



### «Ինչպե՞ս ենք տեսնում կյանքն առանց հոմոֆոբիայի» ակցիա

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Հոմոֆոբիայի դեմ պայքարի համաշխարհային օրվան ընդառաջ կազմակերպել էր «Ինչպե՞ս ենք տեսնում կյանքն առանց հոմոֆոբիայի» ակցիան: Ակցիային մասնակցելով մարդկանց հնարավորություն տրվեց ունենալու նաև գեղեցիկ լուսանկարներ:

Ակցիայի նպատակն էր հանրությանը տեղեկացնել օրվա խորհրդի և նշանակության մասին:

Ակցիայի շրջանակներում անցկացվեց ֆլեշմոբ, որն ընթացավ առանց բախումների: ՀՀ ոստիկանության ներկայացուցիչները մի պահ այնպես շրջապատեցին ակցիայի մասնակից երիտասարդներին, որ անցորդների հետ կոնֆլիկտային իրավիճակ ստեղծվեց, իսկ նրանք նույնիսկ չմիջամտեցին: Ընդհակառակը, իրենց իրավասությունների շրջանակներում ակցիայի մասնակիցների անվտանգությունն ապահովելու փոխարեն, ոստիկանները կոպիտ և անհարգալից վերաբերմունք էին ցուցաբերում ակցիայի կազմակերպիչների նկատմամբ: Ակցիայի ընթացքում ՀՀ ՉԼՍ ներկայացուցիչներից մեկը հետապնդում էր մասնակիցներին և վերջիններիս կամքին հակառակ լուսանկարահանում նրանց:

Այդ մասին ակցիայի մասնակիցները հայտնեցին ՀՀ ոստիկանության «Հրեշտակների գումարտակ»-ի ծառայակիցներին, սակայն նրանց կողմից որևէ միջամտություն չեղավ, և տեսանկարահանումը շարունակվեց:

## Բացասական արձագանքը նույնպես չուշացավ

**Մայիսի 18-ին Shame.am կայքը «Հիմա ով է ում դեմ պայքարում» վերնագրով հոդված հրապարակեց, որում նշվում է.**



«Հայաստանի նույնասեռականներն այս անգամ էլ նշեցին այսպես կոչված «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը»: Ընդ որում, օրը նշանավորեցին ոչ թե փակ միջավայրում, այլ «Նոր սերունդ» ՀԿ-ի նախաձեռնությամբ դուրս եկան փողոց՝ հանրությանը «հրազեկելու իրենց օրվա խորհուրդն ու նշանակությունը»: . . .

**Մայիսի 16-ին iravunk.com պաշտոնական կայքում հայտնվեց Հրանտ Սարաֆյանի գրառումը, որում ասվում է.**



«Օրերս «Նոր սերունդ» ՀԿ-ն որոշել է ո՛չ ավել, ո՛չ պակաս նշել, այսպես կոչված, «հոմոֆոբիայի եւ տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը»: Ընդ որում՝ վերջիններս որոշել են չսահմանափակվել իրենց շրջանակում, այլ տխրահռչակ օրվա խորհրդի և նշանակության մասին իրենց նախաձեռնությունն իրականացնել Կասկադում և իրականացնել խայտառակ ֆոտոսեսիա՝ հավանաբար, իրենց «տոնին» համահունչ: Այս պատմության մեջ հատկապես ուշագրավ է Կասկադի համալիրի տարածքում գտնվող Գաֆեսճյան արվեստի կենտրոնի տնօրինության պատրաստակամությունը՝ թույլատրել իրենց տարածքում այսպիսի միջոցառում իրականացնել, երբ ժամանակին խոչընդոտում էին ՀՀ Ազգային հերոս Մովսես Գորգիսյանի կնոջը նույն տարածքում եռագույնը ծածանել»:

**Նույն օրը նույնաբովանդակ գրառում է տեղադրվել նաև henaran.am պաշտոնական կայքում:**



**Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը՝ մայիսի 17-ին, NEWS.am-ը հարցում է անցկացրել Երևանում**



Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը՝ մայիսի 17-ին, NEWS.am-ը հարցում է անցկացրել Երևանում՝ պարզելու մայրաքաղաքի բնակիչների վերաբերմունքը սեռական փոքրամասնություններին և նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների բարձրացրած այն խնդիրներին, որ Հայաստանում LGBS համայնքի ներկայացուցիչները ենթարկվում են բռնությունների, և որ Հայաստանում անհրաժեշտ է ընդունել սեռափոխության մասին օրենք:

*«Հարցմանը մասնակցած երևանցիների մի մասը նշել է, որ բռնությամբ ոչինչ չի փոխվի, իսկ մեծ մասը դեմ է Հայաստանում սեռափոխության օրենքի ընդունմանը: Կային նաև ծայրահեղ կարծիքներ. մի երիտասարդ, օրինակ, նշեց, որ նման օրենքի ընդունման դեպքում կփոխի բնակության վայրը. «Եթե էդ օրենքը ընդունվի, ես կգնամ կապրեմ Ղարաբաղում: Ընդեղ հաստատ չի ընդունվի»:*

*Քաղաքացիներից ոմանք միասեռականությունը համարում են հիվանդություն, հոգեբանական խնդիր, իսկ ոմանց կարծիքով էլ՝ ոչ թե պետք է բռնությամբ փոխել մարդու սեռական կողմնորոշումը, այլ պարզապես չքարոզել այն»- նշվում է NEWS.am կայքի հրապարակման մեջ:*

## **Մայիսի 17-ին տեղի ունեցավ Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված քննարկում**

Մայիսի 17-ին Մեդիա կենտրոնում տեղի ունեցավ Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված քննարկում «ԼԳԲՏԻԶ+ անձանց իրավունքների խախտումները Հայաստանում» թեմայով:

Քննարկմանը մասնակցում էին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի հավասարության և բազմազանության ծրագրերի համակարգող Արման Սահակյանը, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի մարդու իրավունքների եւ շահերի պաշտպանության ծրագրերի համակարգող Նարե Հովհաննիսյանը, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Հայկ Հայրապետյանը և «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը:

**Մեդիա կենտրոնը քննարկումը լուսաբանել է իր պաշտոնական կայքում՝ հայերեն և անգլերեն: Հրապարակման մեջ նշվում է.**



*«Քննարկման սկզբում Արման Սահակյանը ներկայացրեց հոմոֆոբիայի տեսակները: «Առհասարակ հասարակությունում հոմոֆոբիան գիտելիքի պակասի, նախապաշարմունքների եւ որոշակի ավանդույթների հիման վրա հիմնված երեւույթ է, որի դեմ պայքարը հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացումն է եւ ճիշտ ինֆորմացիայի տրամադրումը»,-ասաց նա: Սահակյանը նշեց, որ աշխարհում 100 երկրներ տոնում են այս տոնը: Նա նշեց, որ քաղաքում իրականացնելու են շրջիկ ֆլեշմոբ, «Առողջության իրավունք» ծրագրի շնորհանդեսն է լինելու, եւ բազմազանությունը տոնող փակ միջոցառում: Սերգեյ Գաբրիելյանն ասաց, որ իրենց ՀԿ-ն արդեն 20 տարի է պայքարում է Հայաստանում ԼԳԲՏԻԶ անձանց իրավունքների պաշտպանության համար:*

*«Մենք չենք տեսնում այն առաջխաղացումները, այն թունելի վերջի լույսը, որը պետք է ՀՀ-ում վառվի եւ գերակայեն մարդու իրավունքները, չնայած ՀՀ-ն վավերացրել է բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, որով դատապարտում է հոմոֆոբիան եւ տրանսֆոբիան, բայց այդ փաստաթղթերը մնում են օդում, հասարակության կողմից ավելանում է ագրեսիան»,-ասաց Գաբրիելյանը:*

*Նա ընդգծեց, որ պետության պարտավորությունն է պաշտպանել մարդկանց հոմոֆոբիայից, կանխարգելել աստիճանային կոչերը, որոնք ըստ նրա, սփռված են ՉԼՄ-ներում, պետական, ոչ պետական կազմակերպություններում, սոցիալական*



ցանցերում: Նա ասաց, որ այսօր 6 հազարից ավելի քաղաքացիական կազմակերպություններից 300-ից ավելին զբաղվում են մարդու իրավունքների պաշտպանությամբ, բայց նրանցից 86 տոկոսը ընդհանրապես չեն ցանկանում խոսել այս խնդրի մասին:

«Ավելին՝ վատթարացում կա եւ՛ խտրական վերաբերմունքի, եւ՛ բռնությունների առումով: Մարդիկ նույն կարծրատիպային մթնոլորտում են գտնվում», - ասաց Գաբրիելյանը:

Նարե Զովհաննիսյանն էլ ներկայացրեց «Նոր սերունդ» մարդասիրական ԶԿ-ի իրականացրած հետազոտության արդյունքները, ըստ որի ուժային կառույցներում ֆիզիկական եւ սեռական բռնությունները, անհանդուրժողականության եւ ատելության խոսքը ԼԳԲՏԻԶ անձանց նկատմամբ դրսեւորվում է 100 տոկոսով, մեղիա դաշտում հոգեբանական ճնշումները, անհանդուրժողականության եւ ատելության խոսքի դրսեւորումները՝ 90 տոկոսով, ԼԳԲՏԻԶ ընտանիքներում ֆիզիկական ճնշումները 60 տոկոս են, անհանդուրժողականության դրսեւորումները՝ 72 տոկոս, հոգեբանական ճնշումները՝ 74 տոկոս:

«Պետական կառույցներում ֆիզիկական բռնությունները 5 տոկոս են, անհանդուրժողականության դրսեւորումները՝ 75 տոկոս, առողջապահության ոլորտում սեռական բռնությունը՝ 10 տոկոս, կրոնական կազմակերպություններում՝ 8 տոկոս, ժամանցի վայրերում՝ 55 տոկոս», - ասաց Զովհաննիսյանը:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ԶԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանն ասաց, որ իրենց կազմակերպությունը զբաղվում է տրանս անձանց հիմնախնդիրներով: Նա հայտնեց, որ վերջին 1,5 տարվա ընթացքում ունեցել են 6 անվանափոխություն:

«ԶԶ-ում չունենք այնպիսի օրենք, որը թույլ կտա անձին սեռափոխության վիրահատական միջամտություններ կատարել, հետեւաբար տրանս անձինք ենթարկվում են խտրականության թե՛ բժշկական հաստատությունների, թե՛ բժիշկների կողմից», - ասաց նա եւ նշեց, այս տարի արդեն գրանցվել է տրանս անձանց նկատմամբ 30 բռնության դեպք:

Չայկ Չայրապետյանը նույնպես ընդգծեց, որ օրենսդրական բաց կա:


«Մի դեպքում կան միջազգային պայմանագրեր, որոնք ԶԶ-ն ստորագրել է, սակայն մյուս կողմից չկան ներպետական իրավական ակտեր, օրենսդրություն: Խտրականությունը արգելող օրենքը մեծ նշանակություն ունեցող նորմատիվ ակտ է, եւ իրավապաշտպանների համար բացակայում են այն եղանակները, որոնց միջոցով հնարավորություն կստեղծվեր այդ մարդկանց իրավունքների պաշտպանությունը», - ասաց Չայրապետյանը:



**Մեդիա կենտրոնը քննարկումը լուսաբանել է նաև իր ֆեյսբուքյան էջում:**



**Լուսանկարներ՝ Մեդիա կենտրոնում անցկացված քննարկումից:**



**Նույնաբովանդակ հրապարակում է արվել նաև ԹԵՐԹ.am կայքի կողմից**

Հրապարակումը տեղ է գտել նաև ԹԵՐԹ.am ֆեյսբուքյան էջում:



**«Բոլորը մնացել են սովետի կրթության տակ. ԼԳՏԻԶ համայնքը դժգոհ է վերաբերմունքից» վերնագրով նյութ է հրապարակվել Ա1+ կայքի կողմից**



Նյութը լուսարանվել է նաև Ա1+ ֆեյսբուքյան էջի միջոցով, ինչպես նաև քննարկման վերաբերյալ պատրաստվել է հաղորդում՝ տեսանյութի տեսքով:

Հրապարակման մեջ նշվում է.

*Սեռական փոքրամասնությունների նկատմամբ Հայաստանում անհանդուրժողականությունը մտում է չլուծված խնդիր:*



*«Ոչ մի փոփոխություն չի նկատվում, բոլորը մնացել են սովետի կրթության տակ», - ասում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը.*

*«Պետական կառույցները չունեն կամք, պաշտպանելու իրենց քաղաքացիներին», - նշում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի հավասարության և բազմազանության ծրագրերի համակարգող Արման Սահակյանը:*

*«Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ն արդեն 20 տարի է՝ զբաղվում է սեռական ոչ ավանդական կողմնորոշում ունեցողների շահերի պաշտպանությամբ: Այդպիսի ՀԿ-ները շատ չեն. «6000-ից ավել ՀԿ-ներ ունենք, նրանցից 300-ը մարդու իրավունքների պաշտպանությամբ են զբաղվում, բայց ինչ է կատարվում, 86 տոկոսը չի ուզում խոսել դրա մասին: Դա մտում է քաղաքական հարց», - ասում է Սերգեյ Գաբրիելյանը:*

*Լիլիթ Մարտիրոսյանը իր մաշկի վրա է զգում, թե ինչպես է հասարակությունը ատելություն ու խտրական վերաբերմունք ձեւավորում տրանսգենդեր անձանց նկատմամբ: Նա այսօր կրթություն ստանալու խնդիր ունի. «Ես պատրաստվում եմ*

ընդունվել ԵՊՀ, բայց ես հիմքեր չունեմ, որ կարող եմ սովորել, ես կենթարկվեմ բռնության ու ճնշումների: Շատերն են իրենց ուսումը կիսատ թողել դրա պատճառով»:

**Թեմային անդրադարձել է նաև NEWS.am-ը իր երկու հոդվածներով՝**



«Ուժային կառույցներում ԼԳԲՏ անձինք ենթարկվում են 100 տոկոսով ֆիզիկական, սեռական բռնությունների. Հետազոտություն» և «Սեռափոխությունը Հայաստանում կթույլատրվի՞. ԼԳԲՏ համայնքը ցանկանում է, որ նման օրենք ընդունվի» վերնագրերով:

Դրանցում մասնավորապես նշվում է.

«Ուժային կառույցներում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ֆիզիկական, սեռական բռնությունները, հոգեբանական ճնշումները, խտրական վերաբերմունքը, անհանդուրժողականությունը դրսեւորվել է 100 տոկոսով: Այս մասին այսօր՝ մայիսի 17-ին, Հոմոֆոբիայի եւ տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված քննարկման ժամանակ ասաց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի մարդու իրավունքների եւ շահերի պաշտպանության ծրագրերի համակարգող Նարե Հովհաննիսյանը՝ ներկայացնելով կատարված հետազոտության արդյունքները:

«Մեղիա դաշտում հոգեբանական ճնշումները, խտրականությունը, անհանդուրժողականությունը դրսեւորվել է 90 տոկոսով: ԼԳԲՏ անձանց ընտանիքներում ֆիզիկական, սեռական բռնությունները կազմում է 60 տոկոս, կրոնական կազմակերպություններում՝ 8 տոկոս», - ասաց նա:

Նարե Հովհաննիսյանի խոսքով, ուժային, պետական կառույցներում ԼԳԲՏ անձինք խտրական վերաբերմունքի, ծաղրուծանակի են ենթարկվում գործընկերների կողմից: Ընտանիքներում նույնպես խտրական վերաբերմունք կա: Ըստ Նարե Հովհաննիսյանի, նման անձինք կամ փորձում են թաքցնել իրենց կողմնորոշումը, արտագաղթում են կամ մարզերից տեղափոխվում Երեւան:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանն էլ նշեց, որ հունվարից առ այսօր տրանսգենդեր անձանց կողմից 30 բռնության դեպք է գրանցվել, 6 անձ էլ անվանափոխություն է արել: «Տրանսգենդեր անձինք զբաղվում են հիմնականում սեքս աշխատանքով եւ շատ հաճախ են ենթարկվում բռնության», - ասաց Լիլիթ Մարտիրոսյանը:

«Հայաստանում LQFS համայնքն ամեն ինչ անելու է, որ սեռափոխությունն օրենքով թույլատրվի», - ասաց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը»:

**Hayatsk.info-ն նույնպես հրապարակել է հոդված՝ «Հայաստանում LQFS-ի համայնքն ամեն ինչ անելու է, որ սեռափոխությունն օրենքով թույլատրվի» վերնագրով.**

Դրանում մասնավորապես նշվում է.

«Այժմ մենք աշխատում ենք բժիշկների, հրավաքանների հետ, որ Հայաստանում սեռափոխության օրենք ընդունվի կամ գործող օրենքներում այնպիսի փոփոխություններ արվեն, որ թույլատրվի սեռափոխություն անել», - ասաց Սերգեյ Գաբրիելյանը:

«Իրավունքի կողմ» հրավապաշտպան ՀԿ-ի



նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի խոսքով, տրանսգենդեր անձանց հրավունքներն այսօր խախտվում են, քանի որ սեռափոխությունը Հայաստանում օրենքով չի կարգավորվում»:

**Քննարկումը լուսաբանվել է նաև LGBT News կայքի կողմից, որում նշվում է.**



«LQFS-ի անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման ու բռնությունների առումով անցյալ տարիների համեմատ այս տարի ոչ մի դրական փոփոխություն չկա, միայն կա իրավիճակի վատթարացում: Նման կարծիք այսօր Հոմոֆոբիայի եւ տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ հրավիրված ասուլիսի ժամանակ հայտնեց «Նոր Սերունդ» Մարդասիրական հ/կ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը:

Կազմակերպության՝ հավասարության եւ բազմազանության ծրագրերի համակարգող Արման Սահակյանն էլ նշեց, որ իրավիճակի վատթարացման պատճառն այն է, որ LQFS-ի անձանց տեսանելությունը Հայաստանում տարեցտարի բարձրանում է ու հոմոֆոբ/տրանսֆոբ հասարակությունում տեսանելության բարձրացման հետ կապված ավելանում է նաեւ ատելությունը, ազդեսիան տվյալ անձանց նկատմամբ:



**«Չունենք բալանսավորված պաշտպանվածություն պետության կողմից»,-** նշեց Սահակյանը:

Սերգեյ Գաբրիելյանը հավելեց, որ չնայած Հայաստանը վավերացրել է բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, որոնք դատապարտում են հոմոֆոբիան եւ տրանսֆոբիան, բայց այդ փաստաթղթերը մնում են օդում ու չեն գործում, իսկ եթե գործում են, ապա միայն այն չափով, որքան հարկավոր է պետությանը:

Գաբրիելյանը խոսեց նաեւ ՉԼՄ-ներում առկա խտրական վերաբերմունքի մասին. «ՉԼՄ-ների մոտ գերակայում է խտրականությունը, խոշտանգումը եւ ատելության կոչի գերակայությունը, ՉԼՄ-ների 80 տոկոսից ավելին ատելության կոչեր է անում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ, ինչպես նաեւ թիրախավորվում են ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հ/կ-ները եւ իրավապաշտպանները»:

Ըստ Գաբրիելյանի՝ ելնելով ՉԼՄ-ների եւ հասարակության հոմոֆոբ վերաբերմունքից՝ ԼԳԲՏԻ համայնքի մեծամասնությունը չի դիմում իրենց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հ/կ-ներին, իրավապաշտպաններին՝ պաշտպանելու իրենց իրավունքները. «Կան մարդիկ, որոնք գալիս են, դիմում են, իրավաբանական խորհրդատվություն են ստանում, բայց երբ հարցը հասնում է ոստիկանություն, դատական ատյաններին դիմելուն՝ մարդիկ վախենում են իրենց ինքնությունը բացահայտելուց»:

«Նոր Սերունդ» Մարդասիրական հ/կ-ի մարդու իրավունքների եւ շահերի պաշտպանության ծրագրերի համակարգող Նարե Հովհաննիսյանը ներկայացրեց իրենց կողմից նախորդ տարի իրականացված հետազոտության արդյունքները: Հետազոտությունը վերաբերում է Հայաստանի 10 մարզերում եւ Երեւանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ անհանդուրժողականության եւ խտրականության դրսեւորումներին: Ըստ որակական հետազոտության արդյունքների՝ ՀՀ ուժային կառույցներում ֆիզիկական, սեռական բռնությունները, անհանդուրժողականության եւ ատելության խոսքի դրսեւորումները, հոգեբանական ճնշումները դրսեւորվել են 100 տոկոսով, մեդիա դաշտում անհանդուրժողականության եւ ատելության խոսքի դրսեւորումները, հոգեբանական ճնշումները դրսեւորվել են 90 տոկոսով, ԼԳԲՏԻ անձանց ընտանիքներում ֆիզիկական ճնշումները 60 տոկոս դեպքերում են, անհանդուրժողականության դրսեւորումը՝ 72 տոկոս, հոգեբանական ճնշումները՝ 74 տոկոս, պետական կառույցներում ֆիզիկական, սեռական բռնությունները՝ 5 տոկոս, անհանդուրժողականության, ատելության խոսքի դրսեւորումները՝ 75 տոկոս, հոգեբանական ճնշումները՝ 74 տոկոս, առողջապահական ոլորտում սեռական բռնությունը դրսեւորվել է 10 տոկոսով, կրոնական կազմակերպություններում՝ 8

տոկոսով, աշխատավայրերում, ուսումնական հաստատություններում՝ 5 տոկոսով, ժամանցի վայրերում՝ 55 եւ համայնքի ներսում՝ 10 տոկոսով:


«Իրավունքի կողմ» ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը խոսեց սեռափոխությունը թույլատրող օրենքի բացակայության մասին, ինչի հետեւանքով էլ, ըստ նրա, տրանս անձիք ենթարկվում են խտրականության բժշկական հաստատությունների, բժիշկների կողմից:

Նա նշեց, որ իրենք ILGA Europe հասարակական կազմակերպության հետ իրականացնում են տրանս անձանց նկատմամբ 2016-2017 թվականներին ընթացքում ատելության հիմքով հանցագործությունների փաստագրում եւ հոլովարից մինչեւ մայիս ամիսն արդեն գրանցել են տրանս անձանց նկատմամբ բռնության 30 դեպք: Զեկույցը հրապարակվելու է 2018-ի հոլովարին:

**Ի դեպ, Հայաստանում այս ակցիային միացել էր նաև Մեծ Բրիտանիայի դեսպանատունը, որի շենքին մայիսի 17-ին ծածանվում էր նաև ԼԳԲՏ+ բազմերանգ դրոշմը:**

**Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը օրվա մասին լուսաբանել է նաև իր ֆեյսբուքյան էջում՝ նշելով.**

«Մայիսի 17-ը հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրն է և միտված է իրազեկել լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս անձանց կյանքը պաշտպանելու անհրաժեշտության մասին և ապահովել, որ ամբողջ աշխարհում նրանք կարողանան ապրել խտրականությունից ու բռնություններից զերծ միջավայրում»:







**Հրապարակումների տակ թողնվել են այնպիսի մեկնաբանություններ ինչպիսիք են.**

- «Իսկ ինչու՞ չեք պաշտպանում ինցեստը, մանկապիղծներին, զոոֆիլներին և բռնաբարոդներին: Իրենք էլ ոչ բնական սեռական հակումներ ունեն, հիվանդ են սեռական աղավաղումներով և փոքրամասնություն են: Միայն մարդը կարող է այսպես տրվել իր կրքերին, ընկնել ցեխի մեջ ու ասել,- ես փոքրամասնություն եմ, պաշտպանեք ինձ: Ո՞նց եք պատկերացնում, օրինակ՝ Էգ առյուծը Էգ առյուծի հետ կամ որձ արծիվը որձ արծվի հետ, կամ առնետը կատվին անի, Էջը՝ մարդուն, մարդը խոզին: Կամ չլինի մայր մեղու, այլ լինի լեզբբանկա մեղու: Եթե ինչ-որ մեկը որոշել է իր հետույքը դեմ տա որևէ մեկին, ապա դա իր խնդիրն է: Ինչու՞ եք քարոզում և ուզում, որ ես քիչ չի հարգեմ, այլ պաշտպանեմ դրանց:

- Ամենա դեմքը գիտե՞ս որևա: Ասում են Հայաստանը Եվրոպա մի սարքեք բայց սաղ եվրոպական երկրները մեզնից լավ են ապրում: Անգլիան ունի 32 հատ նույնասեռական պատգամավոր ազգային ժողովում, մեզնից էլ շատ քրիստոնյա են: Վա՛տ են ապրում: Անտրամաբանորեն մենակ բան լինի դեմ լինեն: «Հային վայել չի» կասեն ու կգնան տուն կնիկ ծեծելու:

- Քարոզչությունն ավելի է սրում իրավիճակը: Սա չի կարող հասարակության փոփոխության պատճառ դառնալ: Սա անևորմալ քարոզչություն է: Եթե տվյալ ժողովուրդը չի ուզում և պատրաստ է չէ դա ընդունել, ապա պետք է չէ ազդեսիվ քարոզչություն ծավալել: Եհովայի վկաներից բեթար քարոզչություն են ծավալում:

- Դրանց ինչ պաշտպանել արա, պիտի դրանց սաղին մի տեղ, բենզին լցնեն վրեքը, վառեն, երկիրը մաքրեն կեղտերից:

- Վերջ տվեք այս զզվելի քարոզը մեր երկրում և այլն»:

## **Ֆեյսբուքյան տիրույթում ակտիվ գրառումներով հատկապես աչքի են ընկել մի քանի օգտատերեր.**

### **«Ankakh Hayastan» անունով օգտատերն իր ֆեյսբուքյան էջում գրել է.**

«Դեսպանատունը չգիտեմ, բայց համասեռամոլներին երկրից վտարելու համար կարելիյա բողոքի ցույց անել. **Դրանք վիրուսի նման շատ արագ տեմպերով տարածվում են** երկրով մեկ ու պետքա դրա դեմը առնվի ինչ որ մի ձեւ.»:

«Դիվանագիտական եւ հյուպատոսական կապերի մասին Վիննայի կոնվենցիան հստակ նշում է այն գործառույթները, որոնք կարող են իրականացնել դիվանագիտական ներկայացուցչություններն այս կամ այն երկրում: Մեծ Բրիտանիայի դեսպանատան այս քայլը հիշատակված կոնվենցիայի ոչ մի դրույթի մեջ չի տեղավորվում: Ո՞վ ասեց, որ իրենց տարածքն է՝ ինչ ուզեն կարող են անել: Չկա նման բան: /քաղաքագետ Զրանտ Շահնազարյան/:

### **ՊԱՅԱՆՔՈՒՄ ԵՄ դեսպանին ԱԳՆ կանչի եւ բացատրի, որ այն ինչ իրենց համար հարազատ է, մեզ համար անընդունելի է: Եվ ստիպել, որ իջեցնեն այդ լաթը:**

ԱՂԻԻ ԱԳՆ, մի անգամ տոտուզներդ շարժե՛ք: Խոսնակին, եթե գիտեք թե՛գեք. մեր մայրաքաղաքում պիտի սենց դրոշ չճածանվի!!!»:

«Սա Զայաստանն է, որտեղ Ես պահին ծածանվում է սեռական փոքրամասնությունների դրոշը: Ծածանվում է քանի որ դեսպանատուները գիտեն, թե իրանք դեմք են ու ինչ ուզեն կարան մեր երկրում անեն: Ծածանվում է, քանի որ Ես փոքրամասնությունները Զայաստանում արդեն կան ու իրանց լավ են զգում: Զորդորում եմ ինչքան զոմիկ եք տեսնում քացու տակ քցեք, այո, Ես զոմիկ եմ ու անհանդուրժող: Մեկդ ԱԳՆ-ին ասեք Ես դրոշը իջացնել տան: Սա Զայաստանն է ու ստե զոմիկները տեղ չունեն!!!»:



**«Arman Ghukasyan» անունով օգտատերն իր ֆեյսբուքյան էջում կատարել է հրապարակումներ, մասնավորապես.**

**«Բոլորին կոչ եմ անում կիսվել եւ գալ վաղը 12:00-ին Բրիտանիայի դեսպանատան առջեւ»:**

**«Ասումա մի խայտառակեք մեր երկիրը ձեր սահմանափակությամբ: Կարողա բրիտանացիները նեղանան, որ LQFS դրոշը հայերին դուր չի գալիս»:**

**«Կույս կանանց միավորում» ՀԿ-ն իր ֆեյսբուքյան էջում կատարել է հետևյալ գրառումը.**

*«Կույս Կանանց Միավորումը» տազնապած է Երեւանի Բաղրամյան պողոտայում Մեծ Բրիտանիայի դեսպանատան տարածքում ծածանվող LQFS դրոշի կապակցությամբ: Մենք ողջունում ենք դրոշի դեմ բողոքող ազգատենչ երիտասարդների հայապահպան ջղաձգումը: ԿԿՄ-ն արդեն բողոքի պաշտոնական նոտա է հղել Մեծ Բրիտանիայի թագուհի Եղիսաբեթին: Արշալույս Ենոքյանի ցասմագիրը թագուհուն կոչ է արել չպղծել առաջին քրիստոնյա երկրի գենետիկ ամրոցը: Դեպքի կապակցությամբ կայացել է ԿԿՄ արտահերթ նիստ, որի արդյունքում որոշվել է.*

*ա) անխնա քննադատել հայու ոգու դեմ որեւէ ձգույթուն,*

*բ) մոբիլիզացնել «Նաիրյան ստինքներ» եւ «Թող որ աճեմ» խմբակների ուժերը՝ արատավոր երեւույթը խոյահարելու հանգրվանում,*

*գ) խրախուսելամեն հայեցին,*

*դ) սերունդներին ոգեշնչել Անդրանիկ զորավարի, Սոսե մայրիկի եւ կտրիճ Դավոյի կերպարներով:*

*Հանրությանը կոչ ենք անում ցուցաբերել զգոնություն եւ կասկածելի դրոշների ծածանման դեպքում շտապ կապվել մեզ հետ»:*

**«Կույս Կանանց Միավորում» ՀԿ-ի գրառումը տարածվել է նաև <http://asekose.am/> կայքի կողմից:**




**Թեմային անդրադարձել է նաև aysor.am-ը՝ կատարելով գրառում և՛ իր պաշտոնական կայքում, և՛ ֆեյսբուքյան էջում.**

**Պատրաստվել է նաև տեսալուր:**

Գրառման մեջ նշվում է.

*«Յոմֆոբիայի եւ տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը նշվում է ամեն տարի մայիսի 17-ին ավելի քան 100 երկրում՝ բարձրաձայնելու LԳԲՏ մարդկանց իրավունքների ոտնահարումների մասին:*



**Տեղադրվել է տեսահոլովակ նաև [www.videoarchive.us](http://www.videoarchive.us) կայքում**

**ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանատան տարածքում ծածանվող LԳԲՏ հանրության դրոշմ մեծ դժգոհության ալիք էր բարձրացրել հանրության շրջանում**



**Ա1+-ի անդրադարձը.**

*«Չանուն օրենքի» հասարակական շարժման անդամները, որ բողոքի ակցիա են անցկացրել դեսպանատան դիմաց, համարում են, որ դրոշի բարձրացնելը քարոզչություն է, որն իրավունք չունի իրականացնել օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունը:*

*Ակցիայի մասնակիցները հատուկ շեշտեցին, որ իրենք դեմ չեն LԳԲՏ անձանց եւ ամենեւին էլ կողմնակից չեն նրանց իրավունքների խախտմանը, ուղղակի դեմ են, որ այլ երկրի դիվանագիտական ներկայացուցչությունը խախտի Վիեննայի կոնվենցիան եւ իրականացնի բացահայտ քարոզչություն հյուրընկալ երկրի տարածքում»:*





տեղեկատվական-վերլուծական կենտրոն-ի կայքի,  
ինչպես նաև HayNews.am կայքի կողմից:



**«Չանուն օրենքի» հասարակական շարժման անդամներն անձամբ գնացին  
դեսպանատուն և պահանջեցին, որպեսզի ծիածանագույն դրոշն իջեցվի:**

**«168 ժամ»-ը նշում է.**

«Մայիսի 17-ին ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը ծածանել էր սեռական փոքրամասնությունների՝ ԼԳԲՏ դրոշը, ինչը



հարուցել էր «Չանուն օրենքի» հասարակական շարժման գայրույթը, եւ նրանք այսօր բողոքի ցույց էին կազմակերպել դեսպանատան առջեւ: Բողոքի ակցիայի ժամանակ նրանք իրենց նամակը հանձնեցին ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանատուն:

«Չանուն օրենքի» հասարակական շարժման համակարգող Արման Ղուկասյանն ասաց. «Մայիսի 17-ին Մեծ Բրիտանիայի դեսպանատունը ծածանեց ԼԳԲՏ համայնքի դրոշը: Ինդիքը նրանում է, որ գոյություն ունի կոնկրետ կոնվենցիա՝ 1961թ. Վիենյան կոնվենցիան, որը կոնկրետ նշում է, թե ինչ ֆուկնցիաներ պիտի կատարեն դիվանագիտական տեսչությունները եւ ընդհանրապես դեսպանատներն օտար երկրներում»:

**«Սողոմ-Գոմորը Հայաստանում դեսպանատուն չպետք է ունենա» վերնագրով  
սյուլթ է հրապարակվել «Ա1+» կայքի կողմից, որում մասնավորապես նշվում է.**

«Մի քանի օր առաջ ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը բարձրացրել էր ԼԳԲՏ հանրության դրոշը: Դա առաջացրել էր նաեւ Կոտայքի թեմի հոգեւոր հովիվի դժգոհությունը. «Հստակ միտք արտահայտող կարգախոս է, Սողոմ-Գոմորը Հայաստանում դեսպանատուն չպետք է ունենա»,- ասաց Տեր Կյուրեղ քահանա Տայանը»:

**Tert.am-ի հետ զրույցում «Չանուն օրենքի» հասարակական շարժման  
համակարգող խորհրդի անդամ Ծովինար Կոստանյանը նշել է.**

«Մենք հայտնել ենք մեր վրդովմունքը, պահանջներ ենք ներկայացրել, որպեսզի Մեծ Բրիտանիայի դեսպանատունը ներողություն խնդրի: Դեսպանատան ներկայացուցչին, ով չներկայացավ, նամակ ենք հանձնել և՛ պահանջներով, և՛ բացատրությամբ: Նա բանավոր խոստացավ, որ նամակին կպատասխանեն»:



«Հանուն օրենքի» հասարակական շարժման բողոքի ակցիայի մասին լուսաբանել են նաև <http://www.arminfo.info> և <http://hayastan24.com> կայքերը:



Բողոքի ակցիայի վերաբերյալ <https://www.youtube.com/> կայքում տեսահոլովակներ են տեղադրվել NEWS.am, 1in.am , 168.am լրատվական օգտատերերի կողմից:



**Հունիսի 27-ին «Հայք» մամուլ ակումբում տեղի ունեցավ «Ժողովրդի ձայնը» հասարակական ակումբի մամուլ ասուլիսը «ՌՎՔԵՐ և ինչպե՞ս են Հայաստանում գրադվում ԼԳԲՏ քարոզչությամբ» թեմայով:**

Ասուլիսի ընթացքում նշվեց, որ Հայաստանում վերջին մի քանի ամիսները խորհրդանշական էին ԼԳԲՏ քարոզչության տեսանկյունից, քանի որ արտաքին հովանավորների աջակցությամբ այն ակտիվ տարածում գտավ որոշ հասարակական կազմակերպությունների ջանքերով: Մասնավորապես քարոզչության ակտիվ փուլը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Բրիտանիայի դեսպանատունն իր պետական դրոշի փոխարեն ծածանեց ԼԳԲՏ համայնքի դրոշը: Այդ քայլից հետո Երևանի կենտրոնում անօրինական կերպով փակցվեցին միասեռականություն գովազդող վահանակներ: Այդ օրերին «Նոր սերունդ» ՀԿ-ն կազմակերպել էր միասեռականների երթ, որը տեղի ունեցավ Երևանի կենտրոնական փողոցներում: Ասուլիսի ընթացքում նշվեց, որ Հայաստանում վերջին մի քանի ամիսները խորհրդանշական էին ԼԳԲՏ քարոզչության տեսանկյունից, քանի որ արտաքին հովանավորների աջակցությամբ այն ակտիվ տարածում գտավ որոշ հասարակական կազմակերպությունների ջանքերով: Մասնավորապես քարոզչության ակտիվ փուլը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Բրիտանիայի դեսպանատունն իր պետական դրոշի փոխարեն ծածանեց ԼԳԲՏ համայնքի դրոշը: Այդ քայլից հետո Երևանի կենտրոնում անօրինական կերպով փակցվեցին միասեռականություն գովազդող վահանակներ: Այդ օրերին «Նոր սերունդ» ՀԿ-ն կազմակերպել էր միասեռականների երթ, որը տեղի ունեցավ Երևանի կենտրոնական փողոցներում:

Բանախոսներից Ծովինար Կոստանյանն ընդգծել է.

*«Հայաստանում այսօր կիրառվում է Օվերտոնի պատուհաններ տեխնոլոգիան, որն ուղղված է արդիականացնելու այն, ինչը սկզբում տվյալ հասարակությունը չի*

ընդունում, իսկ հետո դա սովորական բնույթ է կրում: Հենց այս նպատակն ունի LQFS քարոզչությունը Հայաստանում, որն անցնում է տարբեր փուլեր: Դրոշի ծածանումը, վահանակների տեղադրումը, սոցիալական ցանցերում տեսանյութերի և հոդվածների տարածումը LQFS թեմայով հենց այն փուլն է, երբ նման այլասերվածության հասնող դրսևորումները ներկայացվում են որպես բնական երևույթ, որը ոչ միայն պետք է հանդուրժել, այլ նաև պաշտպանել: Միակ ելքն այն է, որ Հայաստանում օրենքի մակարդակով տարանջատվի այլասերվածության քարոզչությունն իրավունքների պաշտպանությունն հասկացողությունից և դա արվի ոչ միայն առօրյա կյանքում, այլ նաև համացանցում»:

## **Ատելության խոսքի, խտրականության և բռնության դրսևորումների այլ դեպքեր**

«Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի» միջազգային օրը ևս մեկ առիթ հանդիսացավ համոզվելու համար, որ ՀՀ-ն ի զորու չէ ապահովել իր բոլոր քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը՝ անկախ սեռից, սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Չնայած այն հանգամանքին, որ խտրական վերաբերմունքի դրսևորման առավել ակտիվ շրջաններն էին «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի» միջազգային օրվան նախորդող և հաջորդող օրերը, այլ ժամանակահատվածներում ևս արձանագրվել են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի, խտրականության և բռնության դրսևորումների բազմաթիվ դեպքեր:

Խտրականությունը դրսևորվում է ոչ միայն LQFSԻԶ+ անձանց, այլ նաև նրանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների նկատմամբ, թե՛ եկեղեցու և թե՛ պետական մարմինների, այդ թվում՝ իրավապահ մարմինների կողմից:

ՀՀ Սահմանադրության 8.1 հոդվածում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյազ Առաքելական Սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Սահմանադրության այս ձևակերպմամբ ՀՀ-ն Հայ Առաքելական եկեղեցուն տալիս է բացառիկ դեր, արտոնություն, իրավունքների և լիազորությունների փաթեթ, որով օժտված չէ որևէ այլ կրոնական կազմակերպություն:

Միայն հողվածի ձևակերպումն ինքնին վտանգ չի ներկայացնում: Այդ վտանգն ի հայտ է գալիս, երբ Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչները փորձում են օգտագործել իրենց տրված առավելությունը՝ որոշակի խմբերի ներկայացուցիչներին վիրավորելու համար:

**<http://henaran.am> կայքը նյութ է հրապարակել «Ոչ մի աթեիստ, համասեռամուլ իրավունք չունի սովորեցնելու, թե ինչ պիտի անի Եկեղեցին» վերնագրով, որտեղ մեջբերվում է Տեր Նշան Բահանա Ալավերդյանի խոսքերը.**

*«Բարոյական չէ, երբ ընտանիքի անդամ չեն, բայց որոշում են ընտանիքի ինչպես ապրելը: Եկեղեցին Զրիստոսի խորհրդական մարմինն է, եւ ո՛չ մի աթեիստ, անաստված, համասեռամուլ իրավունք չունի սովորեցնելու, թե ինչ պիտի անի Եկեղեցին: Ձեզ նոր փրկիչներ մի երեւակայեք:*



**ՓՐԿԻՉԸ ՄԵՎՆ Է՝ ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԸ:**

*Կամ հավատացեք իրեն ու ապրեք իր պատվիրաններով, կամ հարգեք այլոց ազատությունը, ովքեր ընտրել են ըստ Ավետարանի ապրելը: Իրական քրիստոնյան ուրիշին չի պարտադրում Աստծուն հավատալը, սիրելը, Զրիստոսով ներելը: Ձեզ ոչ ոք չի գալիս ձեր տանը պարտադրում քրիստոնեական արժեհամակարգ, դուք էլ մի փորձեք գալ Զրիստոսի ընտանիքում իր Ավետարանին հակառակ նորմեր պարտադրել»:*

Հայտարարության մեջ նշվում է «Համասեռամուլ» արտահայտությունը, որի մոլ վերջածանցը նշանակում է մոլուցք, հիվանդություն: Այս արտահայտությամբ այն անձանց դիմելը, ովքեր ունեն նույնասեռական կողմնորոշում, համարվում է վիրավորանք: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է՝

<http://www.aravot.am> կայքը կյուրթ է հրապարակել «ՀՀ ավտովարորդները կասկածում են, որ «Յանդեքս» տաքսի ծառայությունը կաշառում է վերնախավին և բյուջե մի կուպեկ չի վճարում» վերնագրով:

Թվում է, թե կյուրթն առնչություն չունի նույնաստեղծական անձանց իրավունքների հետ, սակայն նույնիսկ այլ թեմատիկ հարցազրույցների ժամանակ, մարդիկ որպես վիրավորանք և վատ կերպար օրինակ են բերում նույնաստեղծական անձանց:



«Նոյան տապան» մամուլի սրահում լրագրողների հետ հանդիպման ժամանակ այն հարցին, թե ի՞նչն է պատճառը, որ չեն լուծվում տաքսիների հետ կապված մի շարք խնդիրներ, օրինակ՝ վարորդի հիգիենիկ վիճակը, մեքենայում հնչող տհաճ երաժշտությունը, մեքենաների անսարքությունները և այլն, «Ավտովարորդների պաշտպանության լիգայի» նախագահ Տիգրան Յովհաննիսյանը նշեց.

*«Մեկ միլիոն դոլար շահեցին և բուժզննումն ու տեխնոլոգիաները հանեցին: Ու հիմա չանթերով, շորտերով, բրդուճով, համասեռամուլ, թմրամուլ և այլն, ով ուզում է, տաքսի է քշում»:*

Հայտարարության վերջում արված համեմատությունից ակնհայտ բացասական վերաբերմունք է ցույց տրվում նույնաստեղծական և թմրամիջոցների ներարկային օգտագործող անձանց նկատմամբ: Սա կարող է որակվել որպես խտրականություն, որն արգելված է ՀՀ-ի կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերով, մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածով, որում նշվում է.

Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

<http://www.shame.am> կայքը նյութ է հրապարակել «Օսկանյանը մնացել է ԼԳԲՏ-ի հույսին» վերնագրով:

Նյութում մասնավորապես նշվում է.

Այն, որ ընտրությունների ավարտից հետո հայաստանյան մի շարք լրատվամիջոցներ հայտնվել են փակվելու վտանգի առաջ, արդեն ոչ մեկի համար գաղտնիք չէ: Օգտագործվեցին, իսկ հիմա, երբ մեծ խաղն ավարտվեց, նրանք դարձան անպետք: Իսկ ոչ պիտանի բաների համար փողեր վատնելը լուրջ չէ:



Ըստ տեղեկությունների, կազմաքանդման վտանգը չոքել է նաև Ռոբերտ Քոչարյանին սպասարկող քարոզչական կայքերի դեմը: Իսկ դրանք, ինչպես հայտնի է, համատեղության կարգով ծառայում էին նաև Նախկին ԱԳ Նախարար Վարդան Օսկանյանին ու նրա շրջապատին: ՕԲՕ-ի պարտությունը, Քոչարյանի փափուկ Նահանջը ահազանգ էր, որ ՉԼՄ-ներն իրենց վերջին օրերն են ապրում: Եվ հիմա ծանր կացության առաջ հայտնված Օսկանյանը փորձում է նոր ֆինանսական աղբյուրներ գտնել քարոզչամեքենան պահպանելու համար:

Խոսակցություններ կան այն մասին, որ ներսում փող տվողների փնտրտուքն ավարտվել է անհաջողությամբ: Իսկ ահա դրսի ֆինանսական «դրամապանակները» շատ անհարմար Նախապայմաններով են պատրաստ համագործակցության գնալ: Ասում են, թե Օսկանյանին գումարներ առաջարկում են բրիտանական ու ամերիկյան այն շրջանակները, որոնք առաջ են տանում, այսպես կոչված, «ԼԳԲՏ համայնքի» շահերը: Հիմա Նախկին Նախարարը ծանր երկընտրանքի մեջ է: Փող ունենալը գայթակղիչ է, բայց արժե՞ տրվել դրան այլասերվածության ճանապարհով:

Փաստորեն վերոգրյալ և նմանատիպ այլ արտահայտություններով փորձում են քարկոծել ոչ միայն ԼԳԲՏԻԶ+ անձանց, այլ նաև այն կազմակերպություններին, որոնք զբաղվում են նրանց հիմնախնդիրներով, համագործակցում նրանց հետ կամ հովանավորում նրանց: Նախկին Նախարարի ընտրած ուղին՝ որպես «Այլասերվածություն» որակելը նույնպես արատավորող արտահայտություն է: Այն ոտնահարում է որոշակի խմբի անձանց իրավունքները և ներառվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087 հոդվածով Նախատեսված վիրավորանքի հասկացության մեջ:



**<http://armarlur.com> կայքը նյութ է հրապարակել «Մեզ միասեռականներից պաշտպանող օրենք է հարկավոր» վերնագրով**

«Լույս» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ղեկավար Հայկ Այվազյանի հետ հարցազրույցը ներկայացվում է ստորև.



**- Օրեր առաջ նաեւ ձեր կազմակերպության շնորհիվ բացահայտվեց, որ Երեւանի կենտրոնում միասեռականներն իրենց պաստառներն են ներկայացրել: Քաղաքացիների բողոքներից հետո պաստառներն ի վերջո հեռացվեցին:**

- Այդ պաստառները, որոնք, ըստ էության, միասեռականությունն քարոզող եւ նրանց իրավունքների մասին բարձրաձայնող բովանդակություն ունեն, մայիսի 25-ից ի ցույց են դրվել մայրաքաղաքի կենտրոնում Կարապի լճի եւ Ֆրանսիայի հրապարակի մոտակայքում: Բարեբախտաբար մեկ-երկու օր հետո մեր համախոհները նկատել են դրանք եւ տեղեկացրել մեզ:

Մենք անմիջապես տեսանկարահանեցինք, լուսանկարեցինք դրանք ու դիմեցինք քաղաքապետարանի թեժ գիծ: Ընդ որում՝ թեժ գծով բազմաթիվ զանգեր էին եղել, որոնց հեղինակները իրենց վրդովմունքն էին հայտնել Երեւանի կենտրոնում ու բանուկ փողոցների հարեւանութամբ նման պաստառների առկայության համար: Ահազանգերից հետո պաստառներն անմիջապես ապամոնտաժվեցին: Քաղաքապետարանից նաեւ տեղեկացրին, որ դրանք անօրինականորեն են տեղադրվել ցուցավահանակներում՝ առանց քաղաքային իշխանությունների թույլտվության:

**- Այս դեպքում միայն քաղաքապետարանի թույլտվությունն անտեսե՞լն է դիտարկվում որպես օրենքի խախտում, թե՞ օրենքը շրջանցվել է նաեւ նման բովանդակութամբ քարոզչական ցուցապաստառները տեսանելի վայրերում փակցնելու նկատառումով:**

- Քաղաքապետարանն ըստ էության պաստառներն ապամոնտաժել է ոչ թե այն բանի համար, որ դրանք միասեռականության ակնհայտ քարոզչություն են, այլ առանց իր թույլտվությունը ստանալու՝ գովազդային վահանակներում պաստառներ տեղադրելու համար: Մեր որեւէ օրենքով ազելված չէ միասեռականությունն քարոզելը կամ նրանց նկատմամբ հանդուրժողականությունն քարոզելը՝ ի տարբերություն Ռուսաստանի: Ռուսաստանի օրենքը, օրինակ, խստորեն արգելում է միասեռականության քարոզչությունը:

Իսկ մեզանում նման օրենք, դրույթ, արգելք չկա: Եվ եթե պաստառներն օրինական ճանապարհով տեղադրված լինեին մայրաքաղաքի կենտրոնում, ապա այդ ժամանակ շատ ավելի դժվար կլիներ դրանք ապամոնտաժելը: Կարելի է ասել՝ այս անգամ պարզապես մեր բախտը բերեց: Հակառակ դեպքում պարտադրված էինք լինելու բողոքի ակցիաներ անցկացնել, արդեն քաղաքային իշխանություններից պահանջել այլասերող բովանդակության պաստառները հեռացնել:

Միասեռական հանրության նման ագրեսիվ, հարձակողական պահվածքը կապում են Հայաստանում մեզ համար անընդունելի երեւույթների նկատմամբ հասարակության կողմից ցուցաբերվող եւ Եվրամիության համար չսպասված դիմադրության հետ: Ի վերջո պաստառներն ի տես բուլրի ցուցադրելու դեպքն ընդամենը մի ռազմավարության հերթական օղակն է:

Կհիշեք, Եվրամիությունը մտադիր էր դեռ անցած տարի Հայաստանին երկու օրենք պարտադրել՝ յուզենալ օրենքը, որը միտված է քայքայելու մեր ավանդական ընտանիքը եւ երեխաներին օտարելու ընտանիքներից, մյուսն էլ միասեռականությունը հանդուրժող եւ դրա տարածմանը նպաստող օրենքն է: Բայց երկու օրենքներն էլ հասարակության ուժեղ դիմադրությանը հանդիպեցին:

Ուստի օրենքների ջատագովները տրամադրված են գոնե այս տարի դրանք մեր երկրում իրագործված տեսնել, այդ իսկ պատճառով մենք կանխատեսում ենք, որ բուլրիս բավական լուրջ փորձություն է սպասում: Եվրոպական կառույցների կողմից գրոհի ճակատներն ավելի կընդլայնվեն եւ տարբեր՝ ընտանեկան բնության, միասեռականների իրավունքների պաշտպանության օրենքները պարտադրելու, այլասերության նկատմամբ մեզանում հանդուրժողականություն սերմանելու ուղղություններով փորձեր կլինեն:

Վստահ եմ, որ Եվրամիությունը նաեւ ֆինանսական ներուժն ավելի կմեծացնի, որպեսզի գրոհելու հնարավորություններն ավելի ծանրակշիռ դառնան, օրենքներն ընդունելու հնարավորություններն՝ ավելի իրատեսական:


- **Ի դեպ, հայտնի՞ է, թե ովքեր են միասեռականության քարոզչական բովանդակությամբ պաստառները տեղադրել Երեւանի կենտրոնում:**

- **Հեղինակները** չեն էլ փորձել թաքցնել իրենց արարքը: Պատվիրատուն «Հանրային տեղեկատվություն եւ գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպությունն է, որն ավելի շատ հայտնի է որպես «Փինք Արմենիա»: Այն միասեռականների իրավունքներով զբաղվող կազմակերպություն է եւ ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Նրանք իրենց կայքում բացահայտ նկարագրել էին թե՛ իրենց տեղադրած պաստառների վայրը, թե՛ դրանց բովանդակությունը:

- Լավ, այդ երեւոյթին դիմագրավելու միակ միջոցը հասարակական ընդվզումն է: Ի վերջո, չկա օրենսդրական որեւէ հենք, սահմանադրության որեւէ դրույթ, որը մեզ հնարավորություն կտա օրենքի դաշտում դիմագրավել այդ չարիքին:

- Փաստորեն այդպիսի օրենք մենք չունենք, որը խոչընդոտեր համասեռամոլության քարոզչությանն ու տարածմանը: Կարելի է ասել՝ օրենքի բացակայությունն այսօր աշխատում է միասեռականների օգտին: Եվրոպայի նկատմամբ որոշակի պարտավորվածությունները առայժմ թույլ չեն տալիս օրենքով դիմակայել այլասերման փորձերին: Ասել է թե՛ մեզանում մեծ օրենսդրական բաց կա, եւ պետք է մեր ներուժը ծառայեցնենք լրացնելու այդ բացը: Հարկավոր է գոնե օրենք ընդունել, որը կարգելի երեխայի ներդաշնակ զարգացմանը խանգարող, նրա հոգեկան առողջությանը վնաս հասցնող եւ բարոյական արժեքները խեղաթյուրող ամեն մի քարոզչություն:

Այդ դեպքում մեր՝ հասարակական կազմակերպությունների եւ նախաձեռնությունների համար շատ ավելի հեշտ կլինի պայքարել օտարամուտ չարժեքների դեմ, իսկ դրանց ջատագովներն ու տարածողներն էլ շատ ավելի զուսպ կդառնան: Մեր կազմակերպությունը նման օրենքի նախագծի համար համապատասխան դրույթներ է մշակել, եւ եթե Ազգային ժողովի պատգամավորներն ի վերջո հանդես գան նման նախագծի առաջարկությամբ, մենք պատրաստ ենք միանալու նրանց եւ աջակցելու:



<http://www.hayary.org> կայքը, իր «Օրվա պահոցը» բաժնում 2017թ.-ի մայիսի 19-ին նշել է.



«Ամեն լուսաբերի (ուրբաթ) օր կրպակներում կարող եք ձեռք բերել «Լուսանցք» ազգային շաբաթաթերթի հերթական թողարկումը.- կարդացեք նոր թողարկումը՝ թիվ 19 (452), մայիսի 19-25, 2017թ.

Այս անգամ կարող եք կարդալ հետեւյալ թեմաների մասին, որոնք ստորել ներկայացնում ենք մասնակի.

Հիմա՝ Գրեյթ Բրիթըն, թե՛ Գեյ Բրիթըն – Հայ երիտասարդները ցանկացան ճշտել Մեծ Բրիտանիայի իրական անունը – Պարտադրանքներ, որոնցից խուսափել եւ միշտ պիտի խուսափի հայությունը...- Նշենք, որ համասեռամոլության նկատմամբ բացասական վերաբերմունքով Հայաստանը առաջատարն է Եվրոպայի 18 երկրների մեջ: Ամերիկյան Pew Research Center կազմակերպության հետազոտության համաձայն՝ կենտրոնական եւ արեւելյան Եվրոպայի 18 երկրների մեջ համասեռամոլության նկատմամբ քաղաքացիների բացասական վերաբերմունքով Հայաստանը առաջատարն է: ՀՀ քաղաքացիների 98%-ը արտահայտվել են համասեռամոլության դեմ եւ նշել են, որ այն պետք է մերժվի հայ հասարակության կողմից: Համասեռամոլության նկատմամբ իր բացասական վերաբերմունքով 2-րդ տեղում է Մոլդովան (91%), իսկ 3-րդ տեղում՝ Վրաստանը (90%): Ռուսաստանում համասեռամոլությանը բացասական են վերաբերվում քաղաքացիների 85%-ը...

...Հետաքրքիր է, որ հենց այս օրերին էլ Մեծ Բրիտանիայի դեսպանատունը հերթական մի այլասերվածության քարոզն արեց... Հետո էլ բացատրեց, թե ինչու է LGBS դրոշ բարձրացրել... Հայաստանում պետք է զգուշանալ նաեւ տարբեր հանրահավաքների ու ցույցերի ժամանակ այս սկամ այն դրամաշնորհակեր հ/կ-ի միանալուն, որը սկզբում ոչ բացահայտ զբաղվում է LGBS համայնքի քարոզչությամբ: Արվամոլների եւ իգամոլների պաշտպանները Հայաստանի վրա միշտ պատրաստ են «տղա բերել»...»:

Հարկ է նշել, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) դեռեւս 1990 թվականի մայիսի 17-ին հեռացրել է «նույնասեռականություն» արխտորոշումը Հիվանդությունների միջազգային դասակարգման (ICD-10) հոգեկան խանգարումների շարքից: Դրանով առաջնորդվում են նաև մեր երկրի հոգեկան առողջության մասնագետները:

Սակայն դեպքերը բազմաթիվ են, երբ նույնասեռական կողմնորոշում ունեցող անձանց համարում են շեղումներ ունեցող, հիվանդ անձիք և փորձում են ծեծի, վիրավորանքի կամ հարկադիր բուժման միջոցով ուղղել նրանց:

## **Ստորև ներկայացվում է նմանատիպ մեկ դեպք, որում բռնության ենթարկված անձը պատմում է իր պատմությունը.**

«Երրորդ դասարանում կողքիս նստած տղային Էնքան Էի սիրում, որ նամակ գրեցի: Ինքը դասդեկին Էր ցույց տվել Էր նամակը:

Դասդեկս տարավ տնօրենի մոտ: Քարտուղարի մոտ սպասում ենք, մամաս Էլ Էր Էնտեղ: Երբ մամայիս ներս կանչեցին ես փախա դպրոցից:

Մեջս ուժ հավաքեցի ու գիշերը շատ ուշ տուն Էկա: Պապաս պառկած Էր:Թուղթը դրած Էր: Ասեց՝ տղա ջան, մի հատ վերցրու կարդա: Վերցրեցի նամակը, կարդացի, ու ձեռնափայտով սկսեց խփել: Հետո աթոռը ջարդեց վրաս, մինչև հիմա ջարված աթոռը մեր տանն ա: Էնպես ուժեղ Էր ծեծում, որ չէի կարողանում օդը ներշնչել ու արտաշնչել:

Հետո ինձնից 10 տարի մեծ ախպերս Էկավ: Պոլին պառկած թարտում Էի: Մի ծեծից պրծանք, Էկավ ինքն Էլ սկսեց ծեծել: Մամայիս չէին թողնում միջամտեր: Էրկու ամիս տնային կալանքի տակ պահեցին:

Էր ժամանակվանից եմ հասկացել՝ ազատությունն ինչ ա»:

<http://www.tert.am-ը> **Նյութ Է հրապարակել, մեջբերելով**

<http://iravunk.com/-ի> գրառումը.

**ԻՐԱՎՈՒՆՔ**  
www.iravunk.com

«Հուլիսի 9-16-ին տեղի կունենա «Ոսկե ծիրան» փառատոնը: Կցուցադրվի 100 ֆիլմ, որից երկուսն արվամոլների մասին Է և նկարահանվել Է Հայաստանում:

«Իրավունք»-ն ԱԺ կրթության, գիտության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Բոստանջյանից հետաքրքրվել Է՝ ինչպես կարձագանքի այս ամենին:

«Իզոլր եք այդ հարցն ինձ տալիս: Ահավոր վատ եմ վերաբերվում: Գուցե հետամնաց ու նահապետ մարդ եմ: Կուլտուրայից դրդված՝ այլ բառեր չեմ ուզում ասել: Չեմ հասկանում՝ ով Է խթանում, ով Է նպաստում, ֆինանսավորում, փող տալիս: Բայց բոլոր դեպքերում, հայ ժողովուրդը... գոնե ես մեռնեի, նոր իմանայի, որ արվամոլություն կա», - ասել Է Վարդան Բոստանջյանը», - գրում Է թերթը:

Նյութն ամբողջությամբ կարդացեք թերթի այսօրվա համարում:



**PanARMENIAN.Net-ն իր կայքում գրել է. «ՀՀ-ում վավեր են միասեռականների ամուսնությունները՝ կնքված արտասահմանում».**

«Այլ երկրների օրենսդրությամբ թույլատրվող միասեռականների ամուսնությունների գրանցումը հավաստող փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունում վավեր են, թե՛ ոչ:


PanARMENIAN.Net-ն այս հարցով դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն: Հարցմանը պատասխանել են ՀՀ ԱՆ ԶԿԱԳ գործակալությունից: Պարզվում է, որ, ըստ ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 143 հոդվածի, ՀՀ քաղաքացիների միջև ամուսնությունները և ՀՀ ու օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնությունները, որոնք կնքվել են ՀՀ տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, ՀՀ-ում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում ՀՀ-ում վավեր են նաև օտարերկրյա քաղաքացիների միջև ՀՀ տարածքից դուրս կնքված ամուսնությունները, եթե պահպանվել է այն պետության օրենսդրությունը:

Ստացվում է, որ եթե ամուսնությունը գրանցվել է ըստ տվյալ երկրի օրենսդրության, ապա ՀՀ-ում այն վավեր է՝ անկախ ամուսինների սեռերից՝ լինի դա ավանդական՝ կնոջ ու տղամարդու, թե՛ 2 կանանց կամ 2 տղամարդկանց միություն, քանի որ օրենքի այս հոդվածում սեռերին անդրադարձ պարզապես չկա»:

**Ատելության կոչեր ու սպառնալիքներ են հնչեցվում նաև Ֆեյսբուք սոցիալական կայքի հարթակներում՝ որոշ օգտատերերի կողմից.**

«Ճանդացեք այս վիժվածք էջին, որը հակահայկական ցենզուրայից դուրս գրառումներ է անում հաճախակի, նաև վստահեցնում են ձեզ



համասեռամուլ է ադմինը և քարոզ է տանում շատ ակտիվ: Հիմա հարց կառաջանա թե ինչպես է այդքան լայք հավաքել էջում, արդյոք էջին հետևող 50.000+ լայքերը համասեռամուլ են: Թույլ տվեք պատասխանեմ ոչ համասեռամուլ չեն բոլորը: Ուրեմն մինչ այդ կիսվում էր էջում հոլմորային գրառումներ տեղադրում տեսանյութեր, որը մարդիկ հավանում էին և կիսվում իրանց էջերում, որի շնորհիվ էլ էջը հավաքում էր հետևորդներ (Like - Follow):

Խոսում են հավասարությունից ու ազատ կարծիքից, ով դեմ է խոսում այդ վիժների հետ կապված, ադմինը բլոկում է տվյալ օգտատերին, կամ հեռացնում

մեկնաբանությունը: Տեղեկացնեմ նաև, որ չափից շատ տգեղ գրառումներ անելուց ով դեմ է խոսում այդ գրառմանը, միանգամից բլոկում է ու ձեռն առնում, թե ինքը, թե մի քանի իր պես վիժվածքներ:

Համոզված եմ շատերն են դա նկատել, նույնիսկ շատերին ամենավերջին բառերով թաքնված աղմիկը վիրավորել է, իսկ ով ցանկացել է հանդիպել մերժել է, այսպես ասած համակարգիչի հետևը պաղկված առյուծ է վիժվածքը: Ափսոս Ֆեյսբուքը ոչ մի կերպ չի տալիս իր օգտատերերի տվյալները, թեկուզ ֆեյքերի, հակառակ դեպքում ամեն մեկը իր տեղը կիմանար ու չափը կճանաչեր: Որոշեցինք իրանց լեզվով խոսանք, սրանից հետո հետևելու ենք այդ էջը՝ գռեհիկ, վիժվածք, համասեռամոլական գրառումներին հավանող և մեկնաբանություն անողների էջերը իրանց ռոժերով հանդերձ տեղադրելու ենք մեր էջում և կիսվելու ենք տարբեր խմբերում, որ մարդիկ իմանան ովքեր են, հատկապես մալալետկա կաթը բերնի մեջ մնացած պուտանկա աղջիկներինը: Դե մենք անցանք գործի, իսկ էջի աղմիկին խոստանում ենք պարզել իր թագնված ֆեյք իքնությունը: Ով այս էջի հետ խնդիրներ է ունեցել խնդրում եմ կապվել նամակով մեզ հետ, շնորհակալություն»:

#### «Ազգային ընտանիք» բանաձևը

**2016թ.-ի նոյեմբերի 19-ին «<https://www.youtube.com>» սոցիալական կայքում տեղադրվել է տեսահոլովակ՝ «Армянская семья» (թարգմանաբար՝ հայկական ընտանիք) վերնագրով:**

Տեսահոլովակը նկարահանվել է ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսավորմամբ: Դրանում, որպես երկրի կայունության և հզորացման հիմք ներկայացվում է ազգային ընտանիքի գաղափարը, ցույց է տրվում հստակ դերաբաշխում՝ կինը՝ ծառայողի դերում, ամուսինը՝ իշխողի:

Տեսահոլովակում՝ «մարդու իրավունքներ», «նույնասեռականություն», «գենդեր», «կարիերա», «ազատություն» և այլ նմանատիպ եզրույթները մեկնաբանվում և դիտարկվում են որպես ընտանիքի քայքայման հիմք:

Տեսահոլովակում մասնավորապես նշվում է.

- «Այժմ, մեր՝ հայերիս հարատևության գաղտնիքներից մեկը՝ «Ազգային ընտանիք» բանաձևը հայտնի է մեր թշնամուն, և նա ջանք ու եռանդ չի խնայում քանդելու այն: Վառ ապացույցն է մանկապարտեզից մինչև ԲՈւՀ, հեռուստատեսությունից՝ համացանց իրականացվող քարոզչությունը՝ անվստահություն, համասեռամոլություն, կեղծ գենդեր, կռվախնձոր դարձած կարմիր խնձոր, կարիերա, կեղծ բռնություն երեխաների նկատմամբ, կեղծ մարդու իրավունքներ, անարխիայի հասցնող ազատություն և այլն»:

Տեսահյուլովակի հեղինակ «Արժանապատվություն» երիտասարդական իրավապաշտպան ՅԿ-ն, հանդիսանալով իրավապաշտպան կառույց, խեղաթյուրում և ոչ լիարժեք է մեկնաբանում ՀՀ Սահմանադրության, օրենքների և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայամանագրերի մի շարք նորմեր:

ՀՀ սահմանադրության 14.1 հոդվածի համաձայն բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Տեսահյուլովակում որպես պետության հիմնաքար և երկրի բնակչության բնական զարգացման գրավական են ներկայացվում անձանց իրավունքների և ազատությունների իրականացումը խոչընդոտող և կասեցնող կարծրատիպերը՝ հատկապես կնոջ՝ որոշակի իրավունքներից զրկված անդամ լինելու հանգամանքը: Այս կարգավիճակը տեսահյուլովակում արդարացվում է, այն համարելով հայոց բազմադարյան պատմության ընթացքում հակառակորդին դիմակայելու միջոց:

ՀՀ սահմանադրության 32 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն:

Այս նորմով երաշխավորվում է բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչների, այդ թվում կանանց աշխատանքի ընտրության ազատությունը:

Տեսահյուլովակում կանանց համար «կարիերա» եզրույթը դիտվում է որպես պետության ազգային անվտանգությանը սպառնացող վտանգ: Կարելի է եզրակացնել, որ տեսահյուլովակի հեղինակները հորդորում են իրավակիրառին՝ զերծ մնալ իրավունքների իրականացումից՝ տեսնելով դրա մեջ սպառնալիք: Սա կարող է նշանակել, որ նորմը, որը տալիս է իրավունք և դրանով վտանգ առաջացնում երկրի համար, զրկված է իրավակիրառ արակտիկայում կիրառվելու հնարավորությունից և դրա ամրագրումը կրում է ձևական բնույթ, ցույց տալու համար մեր երկրի առաջադեմ ժողովրդավարական պետություն լինելու հանգամանքը:

ՀՀ սահմանադրության 16-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք:

Տեսահյուլովակում կա անդրադարձ նաև «կեղծ բռնությանը» երեխաների նկատմամբ: Անհրաժեշտ է, որպեսզի տեսահյուլովակի հեղինակները մեկնաբանեին իրենց կողմից օգտագործված արտահայտությունը: Որո՞նք են «կեղծ» և «իրական» բռնության տարբերակիչ հատկանիշները: Թիչ չեն ՀՀ ոստիկանության տեղեկատվական

բազայում եղած բռնության դեպքերը երեխաների նկատմամբ: Ի վերջո, առկա է նկատելի խնդիր, որի լուծումն ապահովելու նպատակով ՀՀ-ն վավերացրել է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, ընդունել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որի 9-րդ հոդվածը սահմանում է բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը: Դրանում մասնավորապես նշվում է, որ ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ սմանօրինակ այլ վերաբերմունքի:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում ծեծի, ինչպես նաև անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու համար:

Քանի որ երեխաներն օժտված չեն բավականաչափ գիտելիքներով և ինքնապաշտպանության հնարավորությամբ, ուստի հասարակության և պետության կողմից երեխաների պաշտպանության քարոզչությունն ունի էական նշանակություն:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Անմիջականորեն, այսինքն՝ անմիջապես, առանց որևէ փոփոխությունների և ունեն բարձրագույն իրավաբանական ուժ, այսինքն՝ որևէ օրենք, ենթաօրենսդրական ակտ, վճիռ, որոշում կամ որոշակի մարդկանց խմբի կարծիք՝ նույնիսկ հովանավորվող պետական մարմնի կողմից, չի կարող հակասել Սահմանադրությանը:

Տեսահղովակում նշվում է, որ ամուսնությունների թիվը նվազել է, իսկ ամուսնալուծություններինը՝ ավելացել: Եվ այդ երևույթը փոխկապակցում է անձանց կողմից իրենց իրավունքների և ազատությունների իրականացման հետ:

ՄԱԿ-ի կողմից ընդունված «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները պարտավորվում են փոխելու տղամարդկանց ու կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելները՝ նախապաշարմունքների ու սովորույթների և բոլոր այլ պրակտիկաների վերացմանը հասնելու նպատակով, որոնք հիմնված են այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության, կամ տղամարդկանց ու կանանց ստերեոտիպային դերի գաղափարի վրա:

ՀՀ Սահմանադրությունը չի առանձնացնում, որ կինը (այս դեպքում իգական սեռի ներկայացուցիչը) պարտադիր պետք է ամուսնանա, ընտանիք կազմի

տղամարդու (արական սեռի ներակացուցչի) հետ, այլ 35-րդ հոդվածով նշում է, որ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն։ Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով։

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակույթի եւ հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները և կարգավորում է դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները։

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1 հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ կանայք և տղամարդիկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից։

Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) 2016թ-ի հոկտեմբերի 4-ին հրապարակել է Հայաստանի մասին զեկույց։ Տեսահոլովակը ներկայացնում է իրադրությունը 2010թ դեկտեմբերից մինչև 2016 թվականի մարտի 17-ը։ Հեղինակները փաստում են, որ Հայաստանը վճռականություն է դրսևորել անհանդուրժողականության դեմ պայքարում. իշխանությունները ձեռնամուխ են եղել համապարփակ խտրականության դեմ օրենսդրության մշակման գործին։

ՄԱԿ-ի Գլխավոր Անսամբլեայի կողմից ընդունած «Մարդու Իրավունքների համընդհանուր հռչակագիրը», որի հոդված 2-ը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում նշված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ անկախ որևէ ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի տարբերակման։ Ավելին, որևէ տարբերակում չպետք է դրվի՝ ելնելով անհատի երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, լինի դա անկախ, ինսամարկյալ, ոչ ինքնավար կամ որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորում։

ՀՀ Սահմանադրության 2–րդ գլուխն ամբողջությամբ վերաբերում է մարդու իրավունքներին։ Դրա 14.1 հոդվածը սահմանում է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև։ Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, Էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային



փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Ընդհանրացնելով տեսահոլովակի վերաբերյալ իրավական վերլուծությունը, կարելի է ասել, որ տեսահոլովակում առաջ քաշված տեսակետները արտահայտում են բացառապես հեղինակների սուբյեկտիվ դիրքորոշումը՝ «Ընտանիք» հասկացության, դրա կառուցվածքի ու անդամներից յուրաքանչյուրի գործառույթների վերաբերյալ, և իրենց բնույթով չեն արտահայտում ՀՀ-ում գործող, ինչպես նաև ՀՀ-ի կողմից վավերացված իրավական ակտերի էությունը:

Դեռ ավելին, շահագրգիռ անձանց համար «Համասեռամուլ», «Աղավաղված աշխարհ», «Գռեհիկ մշակույթ» արտահայտությունները կարող են դիտվել իբրև վիրավորանք և առաջացնել համապատասխան քաղաքացիաիրավական հետևանքներ:

Վերոգրյալի հիման վրա «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը 20.04.2017թ.-ին՝ ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանն ուղղված գրությամբ, հայտնել է իր լրջագույն մտահոգությունն ու անհանգստությունը հրապարակված տեսահոլովակի վերաբերյալ, որի մասին կից ներկայացրել է նաև գրավոր եզրակացություն:

ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը պատասխան գրությամբ նշել է, որ «Ազգային ընտանիքի» մասին հրապարակված տեսահոլովակի վերաբերյալ գրավոր եզրակացությունն ընդունել է ի գիտություն:



## Սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնության մասին պայմանավորված մարդու իրավունքների խախտման դեպքեր

ՆԱՅԿ-ն՝ 2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2017թ.-ի հունիսի 30-ը ներառյալ, քաղաքացիներին տրամադրել է անվճար իրավաբանական խորհրդատվություն և փաստաբանական ծառայություն:

Իրավաբանական խորհրդատվություն մատուցվել են հիմնականում ԼԳԲՏԻԶ+ անձանց, ԹՆՕ-ներին, ՄԻՎՎ-ով ապրող, սոցիալապես անապահով վիճակում գտնվող, ինչպես նաև բոլոր այն քաղաքացիներին, ովքեր դիմել են ՆԱՅԿ՝ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով:

## Տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների քանակական ցուցանիշները

Ոլորտ	Խորհրդատվության քանակ	Փաստաթղթավորման քանակ	Դատական ներկայացուցչություն
Քաղաքացիական գործեր	135	60	0
Քրեական գործեր	36	3	3
Վարչական	24	2	1

Վերոնշյալ ժամանակահատվածում ՆԱՅԿ իրավաբանական բաժնի կողմից քաղաքացիներին տրամադրվել է թվով 195 իրավաբանական խորհրդատվություն, որից 135-ը տրամադրվել է քաղաքացիական, 36-ը՝ քրեական և 24-ը՝ վարչական գործերով:

Նախորդ ամիսների համեմատ նկատվում է խորհրդատվությունների քանակի դինամիկ աճ, ինչը խոսում է ժամանակին զուգահեռ Կազմակերպության բարի համբավի, հեղինակության և շահառուների մոտ ՆԱՅԿ-ի նկատմամբ վստահության աճի ավելացման մասին:

## **Իրավաբանական խորհրդատվությունների շրջանակներում, իրենց բնույթով առավել ուշագրավ են եղել հետևյալ գործերը.**

### **Գործ № 1.**

#### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Սույն գործում Դիմումատուի մոտ ծագել է ամուսնաընտանեկան հարաբերություններից բխող իրավական խնդիրներ: Վերջինիս կինն իմանալով, որ ամուսինն ունի նույնասեռական կողմնորոշում, ցանկացել է ամուսնալուծվել: Կինը չի ցանկացել ստանձնել երեխայի խնամքը: Օրենքով սահմանված կարգով Դիմումատուն դիմել է համապատասխան ինսամակալության և հոգաբարձության հանձնաժողով՝ երեխայի խնամքը վերցնելու նպատակով: Հանձնաժողովը նույնպես, իմանալով Դիմումատուի սեռական կողմնորոշման մասին, սկսել է բացահայտ կողմապահություն ցուցաբերել նրա նկատմամբ՝ երեխային նրա խնամքին հանձնելու հարցում:

#### **Խնդրի Եական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Դիմումատուն հանդիսանում է նույնասեռական անձ
2. Դիմումատուի կինը ցանկանում է ամուսնալուծվել ամուսնուց՝ նույնասեռական լինելու փաստի հիմքով
3. Ինսամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից ցուցաբերվել է տարբերակված մոտեցում՝ երեխայի խնամքը Դիմումատուին հանձնելու հարցում:

Դիմումատուի երկրորդ խնդիրը կայանում էր նրանում, որ նա աշխատել է գործարանում, որի նկատմամբ ունեցել է որոշակի պարտավորություններ: Գործարանի սեփականատերը հրաժարվել է տրամադրել Դիմումատուի փաստաթղթերը: Դիմումատուի պնդմամբ փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվելու հիմնական պատճառը դիմումատուի խոցելի խմբի ներկայացուցիչ լինելու հանգամանքն է, ինչը հայտնի է դարձել գործատուին:

#### **Խնդրի Եական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Դիմումատուն աշխատել է գործարանում
2. Գործարանի սեփականատիրոջը հայտնի է դարձել անձի նույնասեռական լինելու հանգամանքը
3. Գործարանի սեփականատիրոջ կողմից անձի նույնասեռական լինելու հանգամանքը օգտագործվել է նրա վրա ճնշում գործադրելու համար՝ նրան փաստաթղթերը չվերադարձնելու և կատարված աշխատանքի համար չվճարելու եղանակով:

## **Կատարված գործողություններ**

Իրականացվել է գործի հանգամանքների մանրամասն հետազոտություն, տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն:

ՆՍՀԿ իրավաբան Չայկ Չայրապետյանը կապ է հաստատել գործարանի սեփականատիրոջ հետ և ներկայացրել հիմնավորված պահանջ՝ սեփականատիրոջ կողմից պարտականությունների կատարման պարտադիրության և Դիմումատուի փաստաթղթերի վերադարձման մասին:

## **Գործ № 2.**

### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Դիմումատուն դիմել է Կազմակերպություն՝ բժշկի կողմից իրեն ոչ պատշաճ ատամնաբուժական ծառայություններ մատուցելու վերաբերյալ դիմումով: Դիմումատուի պնդմամբ, բժիշկն իմանալով, որ հիվանդը հանդիսանում է նույնասեռական անձ, դրսևորել էր բացահայտ անհարգալից վերաբերմունք և իր աշխատանքը կատարել թերի ու անորակ: Նրա կողմից կատարված լուսային ատամնային լիցքն այնքան վատ էր տեղադրված եղել, որ Դիմումատուի՝ ատամնաբուժարանից դուրս գալուն պես ընկել էր: Դիմումատուն հրաժարվել էր վճարել կատարված աշխատանքի համար և դիմել էր այլ բժշկի: Սակայն բժիշկը զանգել էր Դիմումատուին և պահանջել վճարել մատուցված ծառայության համար: Դիմումատուն հրաժարվել էր վճարել կատարված անորակ ծառայության դիմաց, ինչից հետո նրան փորձել են սպառնալից տոնայնությամբ և բարձր ձայնով հրավիրել ատամնաբուժարան:

### **Խնդրի էական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Դիմումատուն հանդիսանում է նույնասեռական անձ, ինչն արտաքնապես տեսանելի և ընկալելի է եղել նրա իրավունքները խախտած անձի համար:
2. Անձի նույնասեռական լինելու հանգամանքը պատճառ է հանդիսացել նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորման և իրավունքների ոտնահարման համար:
3. Անձը հրաժարվել է վճարել անորակ մատուցված ծառայության դիմաց և հետամուտ է եղել իր իրավունքների վերականգնմանը:

## **Կատարված գործողություններ**

ՆՍՀԿ-ի իրավաբանը տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն՝ անձին բացատրելով նրա իրավունքները վեճի լուծման արտադատական ճանապարհի բացակայության և ատամնաբուժարանի աշխատակազմի կողմից ապօրինի

գործողություններ կատարելու դեպքում իրավաբանական պաշպանության այլ ճանապարհների մասին:

### **Գործ № 3.**

#### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Դիմումատուն դիմել է ՆՍՀԿ՝ իր խախտված իրավունքների պաշպանության համար: Տուժողը միայնակ կին է, ում խնամքին կա մեկ երեխա: Կինը հանդիսանում է կոմերցիոն սեռական ծառայություններ մատուցող: Նա դիմել է սոցիալական ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ նպաստ ստանալու նպատակով, սակայն մերժվել է: Մերժման որոշում կայացնելու հիմք է ընդունվել նրա աշխատանքային գործունեության բնույթը և դրա նկատմամբ հասարակության մեջ առկա կարծրատիպերը: Մերժման հետ միաժամանակ դիմումատուի վրա փորձել են ճնշում գործադրել և ստիպել հրաժարվել դիմումից:

#### **Խնդրի էական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Դիմումատուն հանդիսանում է կոմերցիոն սեռական ծառայություններ մատուցող կին:
2. Դիմումատուի իրավունքները խախտող անձինք տեղյակ են եղել տուժողի աշխատանքային գործունեության բնույթի մասին:
3. Տուժողի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը պայմանավորված է եղել նրա աշխատանքային գործունեության բնույթով, այն է՝ կոմերցիոն սեռական ծառայությունների մատուցումը:

#### **Կատարված գործողություններ**

Տուժողին մատուցվել է իրավաբանական խորհրդատվություն այն մասին, որ նա իրավունք ունի ընդգրկվելու նպաստ համակարգում և այդ իրավունքը չիրացնելու դեպքում կարող է վերականգնել այդ իրավունքը՝ ընդհուպ մինչև դատական կարգով՝ իր սոցիալական նպաստի ստացման համար կարգավիճակի վերականգնման պահանջով: ՆՍՀԿ-ի իրավաբան Հայկ Հայրապետյանը կապ է հաստատել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ պարզաբանում ստանալու նպատակով, որից հետո դիմումատուի խնդրով զբաղվող աշխատակիցը հավաստիացրել է, որ Դիմումատուի կարգավիճակը կվերականգնվի:

### **Գործ № 4.**

#### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Դիմումատուն հանդիսանում է նույնասեռական անձ: Նրա հետ կապ է հաստատել անհայտ անձ, ով ներկայացրել է որոշակի գործողությունների կատարման պահանջ:



Դրանք պարունակել են շորթման հանցակազմի տարրեր: Պահանջի հիմքում ընկած է եղել դիմումատուի ընտանիքի անդամներին նրա նույնասեռական լինելու փաստը հայտնելու սպառնալիքը:

### **Խնդրի Եական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Անձը հանդիսանում է նույնասեռական:
2. Անձի կողմից նույնասեռական լինելու հանգամանքը օգտագործվել է նրա դեմ պահանջ ներկայացնելու տեսքով:
3. Իրավախախտը գործել է ոչ թե որոշակի գույքային այլ անձնական շահի հետապնդման նպատակով:

### **Կատարված գործողություններ**

ՆՍՅԿ-ի իրավաբան Յայկ Յայրապետյանը շահառուին հորդորել է ձեռնպահ մնալ շտապողական գործողություններից և փորձել ձևացնել, թե ենթարկվում է իրավախախտի պահանջներին, որպեսզի հնարավոր լինի պարզել իրավախախտի ինքնությունը և քրեական գործ հարուցելու նպատակով դիմել ՀՀ քննչական կոմիտե:

### **Գործ № 5.**

#### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Անձը հանդիսանում է նույնասեռական: Նա ունի գույքային խնդիր: Վերջինս ցանկանում է անշարժ գույքից առանձնացնել իր բաժինը, սակայն ընտանիքի անդամները թույլ չեն տալիս: Ընտանիքի անդամները հրաժարվում են դրա դիմաց տալ համապատասխան դրամական փոխհատուցում, պատճառաբանելով, որ Դիմումատուն պատկանում է խոցելի խմբի:

### **Խնդրի Եական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Անձը հանդիսանում է նույնասեռական
2. Անձի նույնասեռական լինելու հանգամանքը հայտնի է նրա ընտանիքի անդամներին
3. Նույնասեռականությունը հիմք է հանդիսացել դիմումատուի ընտանիքի անդամների կողմից՝ նրա իրավունքների սահմանափակման և նրա վրա ճնշում գործադրելու համար:

Դիմումատուի երկրորդ խնդրի համաձայն, անձը հանդիսանում է 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող: Այդ հիմքով անձն ունի հաշմանդամության նպաստ ստանալու իրավունք, սակայն այս ընթացքում այդ հարցով չի դիմել համապատասխան մարմիններին: Արդեն դիմելու ժամանակ, Դիմումատուին ասացին, որ նա արդեն կորցրել է այդ իրավունքն իրականացնելու և իր չստացած գումարները վերցնելու հնարավորությունը:

## **Խնդրի Էական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Դիմումատուն հանդիսացել է Երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ
2. Դիմումատուն ունեցել է հաշմանդամության նպաստ ստանալու իրավունք
3. Դիմումատուն բաց է թողել նպաստ համակարգում ընդգրկվելու համար դիմումի ներկայացման ժամկետը:

## **Կատարված գործողությունները**

Առաջին խնդրով ՆՍՀԿ-ի իրավաբան Յայկ Յայրապետյանը Դիմումատուի հարազատներին պարզաբանել է, որ վերջիններս իրավունք ունեն օգտվելու գնման նախապատվության իրավունքից՝ որպես համասեփականատերեր, սակայն եթե ոչ ապա գույքը կվաճառվի դատարանի որոշմամբ՝ աճուրդի միջոցով:

Երկրորդ խնդրով կատարվել է փաստերի վերլուծություն և Դիմումատուին բացատրվել իր իրավունքների վերականգնման հնարավոր եղանակները:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կապ հաստատելուց հետո պարզվել է, որ անձը կորցրել է հաշմանդամության նպաստից օգտվելու իր իրավունքը:

## **Գործ № 6.**

### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Անձը հանդիսանում է նույնասեռական: Նա ցանկանում է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից՝ հիմք ընդունելով նույնասեռական լինելու հանգամանքը, քանի որ պետությունը չի կարող ապահովել նրա անվտանգությունը: Բժշկական քննության ժամանակ զորակոչային հանձնաժողովը նրանից պահանջել է անցնել բուժզննում և ստացիոնար բուժում ստանալ հիվանդանոցում:

### **Խնդրի Էական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Անձը հանդիսանում է նույնասեռական
2. Բժշկական հաստատության անձնակազմը տեղյակ չէ, որ նույնասեռականությունը չի հանդիսանում հոգեկան հիվանդություն և ենթակա չէ բուժման
3. Բժշկական անձնակազմը ցանկանում է անձին նշանակել ստացիոնար բուժում՝ հաշվի չառնելով նրա և այլ հոգեպես վատառողջ վիճակում գտնվող անձանց կոնտակտի ռիսկայնությունը:

### **Կատարված գործողություններ**

ՆՍՀԿ-ի փաստաբան Յայկ Յայրապետյանը և ծրագրերի համակարգող Արման Սահակյանը բժշկական հաստատության պատասխանատուի հետ կապ հաստատելով, պարզաբանել են, որ նրանք իրավունք չունեն դիմումատուին՝ իր կամքին հակառակ

պահելու բժշկական հաստատությունում, քանի որ Դիմումատուն գտնվում է հոգեպես առողջ վիճակում և նրան հիվանդանոցում պահելու բավարար հիմքեր չկան:

### **Գործ № 7.**

#### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Դիմումատու Գ.Յ.-ն հանդիսանում է նույնասեռական: Նա ցանկանում էր այդ հիմքով ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից: Դիմումատուն պետք է ներկայանար Հանրապետական զորակոչային հանձնաժողով, որտեղ պետք է կայացվեր վերջնական որոշում՝ նրան առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին: ՆՍՀԿ-ի իրավաբան Անահիտ Մկրտչյանը ուղեկցել է վերջինիս՝ զինկոմիսարիատ, անհրաժեշտության դեպքում միջամտության և դիմումատուի իրավունքների և ազատությունների պարզաբանման նպատակով: Չինկոմիսարիատի տարածքում ներկա էին նաև այլ անձինք, մասնավորապես, Դիմումատուին ծանոթ և հարևանությամբ բնակվող քաղաքացիներ, հասակակիցներ: Նրանց տեսնելով Գ.Յ.-ն մի պահ վարանեց և նույնիսկ ուզում էր հեռանալ՝ չիրականցնելով իր իրավունքները: Սակայն Անահիտ Մկրտչյանի միջամտության արդյունքում Դիմումատուն մուտք գործեց հանրապետական զորակոչային հանձնաժողով և հայտնեց իր նույնասեռական լինելու մասին: Ըստ Դիմումատուի հանձնաժողովի նախագահին ասել էր.- «Չգվում եմ սրանցից, տարեք սրան, չեմ ուզում տեսնել»:

#### **Խնդրի էական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Դիմումատուն հանդիսանում է նույնասեռական
2. Գ.Յ. տեղյակ է այն հանգամանքի մասին, որ հասարակությունում առկա է ակնհայտ թշնամանք նույնասեռականների նկատմամբ:
3. Չինծառայողների և հրամանատարների մեջ կան բազմաթիվ անձինք, ովքեր թշնամանքով են լցված նույնասեռականների նկատմամբ:
4. Դիմումատուները շատ հաճախ իմանալով, որ կարող են ենթարկվել խտրականության որոշ դեպքերում խուսափում են իրենց իրավունքներն իրացնելուց:

#### **Կատարված գործողություններ**

Դիմումատուին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն այն մասին, որ վերջինս իրավունք ունի ազատվելու պարտադիր զինվորական ծառայությունից՝ հիմք ընդունելով իր սեռական կողմնորոշումը: Դիմումատուին մեկնաբանվեց նաև հանձնաժողովի գործողություններն ու անգործությունը բողոքարկելու իր իրավունքը:

## **Գործ № 8.**

### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Դիմումատու Ա. Յ.-ն հանդիսանում է նույնասեռական անձ: Դա հայտնի է նրա ծնողներին, բարեկամներին և հարազատներին: Հարազատները բացասաբար են արձագանքել այդ հանգամանքին և պնդել, որ դիմումատուն փոխի իր վարքագիծը: Դիմումատուն պնդել է, որ այդ վարքագիծը փոփոխման ենթակա չէ: Ա.Յ.-ի եղբայրը և հորեղբորորդին բռնություն են գործադրել նրա նկատմամբ, ինչի արդյունքում դիմումատուի մոտ առաջացել են կապտուկներ և վնասվածքներ: Ա.Յ.-ն չի դիմել իրավասու մարմիններին, քանզի չի ցանկացել, որ իր հարազատներից ինչ-որ մեկը քրեական պատասխանատվության ենթարկվի:

Դիմումատուն բացակայում է տանից, սակայն մշտապես հետապնդումներ է նկատում հարազատների կողմից: Դիմումատուի քույրը նույնպես տեղյակ է, որ եղբայրն ունի նույնասեռական կողմնորոշում, սակայն ավելի հանդուրժողաբար է վերաբերվում այդ հանգամանքին:

### **Խնդրի էական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Անձը հանդիսանում է նույնասեռական
2. Անձի ծնողները, բարեկամներն ու հարազատները տեղյակ են նրա նույնասեռական լինելու մասին
3. Անձի քույրը նույնպես տեղյակ է անձի նույնասեռական լինելու մասին և հանդուրժողաբար է վերաբերվում այդ հանգամանքին
4. Նա պարբերաբար ենթարկվել է բռնության
5. Դիմումատուն չի ցանկացել դիմել պատկան մարմիններին իր անվտանգությունն ապահովելու համար, քանի որ չի ցանկացել, որ հարազատները ենթարկվեն քրեական պատասխանատվության:

### **Կատարված գործողություններ**

Տուժողին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն տվյալ իրավիճակում իր իրավունքների մասին: Առաջարկվել է հաղորդում ներկայացնել հանցագործության կատարման մասին, սակայն Դիմումատուն պնդել է, որ չի ցանկանում հաղորդում ներկայացնել ՀՀ ոստիկանություն:

## **Գործ № 9.**

### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Անձը հանդիսանում է նույնասեռական, որի հիմքով դիմել է ՆՍՀԿ՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու վերաբերյալ իրավաբանական խորհրդատվություն ստանալու նպատակով: Անձին հետաքրքրում էր նաև այն հարցը,

թե արդյո՞ք սեռական կողմնորոշումը հանդիսանում է խնդիր՝ հետագայում բժշկական ասպարեզում մասնագիտական գործունեությամբ զբաղվելու համար:

### **Խնդրի Եական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Անձը հանդիսանում է նույնասեռական
2. Անձը՝ նույնասեռական լինելու հանգամանքի մասին ունի նվազ տեղեկատվություն և թյուրիմացաբար նույնացնում է այն հիվանդության հետ:

### **Կատարված գործողություններ**

Անձին տրամադրվել է խորհրդատվություն այն մասին, որ անձի նույնասեռականությունը չի հանդիսանում հիվանդության և նրա իրավունքների իրականացման համար այդ հիմքով որևէ սահմանափակում անթույլատրելի է: Ինչ վերաբերում է պարտադիր զինվորական ծառայությանը, ապա նույնասեռականության հիմքով անձինք ազատվում են պարտադիր զինվորական ծառայություններից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետությունը չի կարողանում ապահովել նրանց անվտանգությունը:

### **Գործ № 10.**

### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Դիմումատու Մ. Տ.-ն հանդիսանում է նույնասեռական: Վերջինս 2016թ. դեկտեմբերի 2-ին գտնվելով «Կովկաս Պանդոկ» ռեստորանային համալիրի մոտ, ոստիկանների կողմից ենթարկվել է բռնության, մասնավորապես, ոստիկաններից մեկը ոտքով հարվածել է Տուժողի դեմքին՝ պատճառելով նրան ֆիզիկական ցավ: Անձը դիմել է ոստիկանություն՝ իր իրավունքների պաշպանության համար, սակայն ոստիկանությունը նրա նկատմամբ ցուցաբերել է անհանդուրժողական վերաբերմունք և անգործություն:

### **Խնդրի Եական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Տուժողը հանդիսանում է նույնասեռական
2. Տուժողի նույնասեռական լինելու հանգամանքը հայտնի է եղել իրավախախտներին
3. Տուժողը ենթարկվել է բռնության և պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի հիմք ընդունելով իր սեռական կողմնորոշումը
4. Իրավախախտները եղել են ոստիկաններ

### **Կատարված գործողություններ**

2016թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում Մ.Տ.-ն՝ փաստաբան Արա Ղարաբյոզյանի հետ մասնակցել է դատավարական գործողությանը: Վերջինս հետաքննիչի մոտ գրավոր բացատրություն է ներկայացրել



նստիկանների կողմից իրեն բռնության ենթարկելու դեպքի վերաբերյալ: Այնուհետև ավարտելով իր բացատրությունը, նույն բաժնում փաստաբան Արա Ղարազյոզյանի հետ միասին տուժող Մ.Տ.-ն հողորդում է ներկայացրել հանցագործության մասին:

Մ.Տ.-ի հողորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազի կողմից 2016թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ x քրեական գործը և ուղարկվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

16.12.2016թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով քննիչ Դոխոյանը որոշում է կայացրել Մ. Տ.-ին տուժող ճանաչելու մասին:

2017թ.-ի հունվարի 13-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում Մ.Տ.-ի հետ միասին ՆԱՅԿ-ի փաստաբան Արա Ղարազյոզյանը մասնակցել է տուժողի հարցաքննությանը: Որպես տուժող Մ. Տ.-ն մանրամասն ցուցմունք է տվել դեպքի վերաբերյալ: Փաստաբան Արա Ղարազյոզյանի ուղղորդմամբ իր ցուցմունքում նշել է, որ նստիկանները իրեն ծեծի ենթարկել և ազատությունից ապօրինի զրկել են իր սեռական կողմնորոշման պատճառով:

01.03.2017թ. Մ. Տ.-ն մասնակցել է առերեսմանը, որի արդյունքում ճանաչել է իրեն բռնության ենթարկած նստիկաններին: Ոստիկանները հաստատեցին այն փաստը, որ բերման են ենթարկել անձին, սակայն հերքեցին, որ բռնություն են գործադրել նրա նկատմամբ:

### **Գործ № 11.**

#### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

Դիմումատու Ս. Զ.-ն հանդիսանում է հագուստափոխ: 2017թ. ապրիլի 15-ին, երեկոյան ժամը 03:00-ի սահմաններում Դիմումատուն զբոսնել է Չաքյան փողոցում՝ սեռական ծառայություններ մատուցելու նպատակով: Նա միայնակ զբոսնելիս է եղել այգում, երբ երեք անծանոթ անձիք հետևել են նրան և ենթարկել ֆիզիկական բռնության: Հաջորդ օրը Ս. Զ.-ն դիմել է ՆԱՅԿ՝ իրավական պաշտպանություն ստանալու նպատակով:

#### **Խնդրի Եական նշանակություն ունեցող հանգամանքներ**

1. Անձը հանդիսանում է հագուստափոխ
2. Անձի հագուստափոխ լինելու հանգամանքը ակնհայտ էր նրա նկատմամբ ոտնձգություն իրականացնողների համար:
3. Անձը ենթարկվել է բռնության այն պատճառով, որ հանդիսանում է հագուստափոխ:
4. Անձը դիմել է ՆԱՅԿ՝ իրավական պաշտպանություն ստանալու նպատակով:

## **Կատարված գործողություն**

Անձին տրամադրվել են փաստաբաններ՝ Արա Ղարազյոզյանը և Հայկ Հայրապետյանը: Փաստաբան Հայկ Հայրապետյանը ցուցաբերել է առաջին իրավական շտապ օգնությունը, իսկ փաստաբան Արա Ղարազյոզյանը ապահովել է տուժողի ներկայացուցչությունը վարույթ իրականացնող մարմնում՝ իրավական ուղեկցություն ապահովելով բացատրագրի տրամադրման համար:

## **Գործ № 12.**

### **Իրավիճակի համառոտ նկարագրություն**

ՀՀ քաղաքացի Վ. Մ. -ն, ով հանդիսանում է բիսեքսուալ, 2017թ.-ի հունիսի 5-ին, ժամը 01:30-ի սահմաններում Հանրապետության Հրապարակի մոտակայքում ծանոթացել է անհայտ անձի հետ: Այնուհետև նրանց միջև տեղի է ունեցել սեռական հարաբերություն: Բռնություն գործադրող անձը տուժողին՝ համատեղ անցկացրած ժամանակի ընթացքում, պատմել է իր մասին, զանգելու նպատակով խնդրել հեռախոսը: Այլ կերպ ասած, փորձել է տուժողի մոտ վստահություն ձեռք բերել: Նույն օրը, ժամը 05:00-ի մոտակայքում Նար-Դոս Այոլուսագործների խաչմերուկի մոտակա տարածքում, ոչ մարդաշատ վայրում տվյալ անհայտ անձը բռնություն է կիրառել Վ.Մ.-ի նկատմամբ՝ որպես հանցանքի կատարման առարկա օգտագործելով քար: Բռնության ժամանակ անհայտ անձը դաժանաբար քարով հարվածներ է հասցրել Տուժողի գլխին, մեջքին և կոնքերին: Բռնությունից հետո, նախնական տվյալներով բռնություն գործադրող անձը հափշտակել է Տուժողի բջջային հեռախոսը:

Տուժողը օգնության նպատակով դիմել է հարևաններին, սակայն վերջիններս սպառնացել են բռնությամբ և պահանջել հեռանալ: 2017թ.-ի մայիսի 5-ին՝ վաղ առավոտյան Տուժողը դիմել է ՆՍՀԿ՝ օգնության խնդրանքով: Կազմակերպությունն անհապաղ արձագանքել է խնդրանքին և օգնություն հայցողին տրամադրել իրավաբանական աջակցություն: Տուժողին տրամադրվել է նաև փաստաբան: Տուժողի հետ միասին ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժանմունք է ներկայացել ՆՍՀԿ փաստաբան Հայկ Հայրապետյանը: Տեղի է ունեցել հետաքննության մարմնի կողմից քաղաքացու հարցաքննություն, որի ընթացքում ներկայացվել են գործի հանգամանքները: Կազմակերպվել է հարցաքննություն քննիչի կողմից, որի արդյունքում քննիչը որոշում է կայացրել Տուժողին թիվ N կտրոն-ծանուցագրի հիմքով ուղղորդել դատաբժշկական փորձաքննության՝ հասցված ֆիզիկական վնասի փաստգրման և ծանրության աստիճանի որոշման համար:

### **Խնդրի Եական նշանակություն ունեցող հանգամանքներ**


1. Տուժողը հանդիսանում է բիսեքսուալ

2. Վ.Մ.-ն սեռական հարաբերություն է ունեցել կասկածյալի հետ
3. Վ.Մ.-ի առողջությանը հասցվել է միջին ծանրության վնաս
4. Կասկածյալը հանդիսացել է նույնասեռական:

#### **Կատարված գործողություն**

ՆՍՀԿ-ի փաստաբան Չայկ Չայրապետյանը դիմումատու Վ. Մ.-ին տրամադրեց իրավաբանական խորհրդատվություն, մասնավորապես այն մասին, որ վերջինս իրավունք ունի դիմել քննչական կոմիտե՝ հանցագործության կատարման մասին հաղորդում տալու համար, իսկ իրեն հասցված գույքային վնասի մասով քաղաքացիական հայց ներկայացնել՝ հատուցում ստանալու համար: Պարզաբանումից հետո Վ. Մ.-ն՝ փաստաբան Չայկ Չայրապետյանի հետ գնացել է Էրեբունի ոստիկանության բաժին, որտեղ հայտնել են կատարված իրադարձության մասին: Չաջորդ օրը Վ.Մ.-ն դիմել է հետաքննիչի որոշման հիման վրա դատաբժշկական փորձաքննություն անցնելու և իրեն պատճառված վնասը գնահատելու համար: Այնուհետև ՆՍՀԿ-ի փաստաբան Արա Ղարազյոզյանը ստանձնելով տուժողի իրավունքների պաշտպանությունը ներկայացրել է դիմում՝ քրեական գործի հարուցման մասին որոշումը ստանալու համար:

**Տարբեր բնագավառներում՝ անձի սեռական կողմնորոշմամբ և գեղեցիկին ինքնության մասին պայմանավորված խտրականության հարցերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունել է մի շարք որոշումներ**



**EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME**

**❖ Հավաքների և միավորման ազատություն.**

Բաշկովսկին և ուրիշներն ընդդեմ Լեհաստանի գործով դիմումատուներն էին Հավասարության Ֆոնդն ու Նրա հինգ անդամները, ովքեր նախատեսում էին կազմակերպել երթ՝ Վարշավայի փողոցներում: Երթի նպատակն էր հանրության ուշադրությունը սևեռել կանանց, փոքրամասնությունների և հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության վրա:

Քաղաքապետարանի ներկայացուցիչներն արգելել են նրանց անցկացնել երթը՝ պայմանավորված երթևեկության կազմակերպման պլանի ճախողմամբ: Սակայն նույն օրը թույլատրվել են այլ երթեր:

Դատարանը նշել է, որ երկրի պոզիտիվ պարտականությունը՝ պաշտպանելու հավաքների ազատության իրավունքը, հատկապես կարելու է, երբ խոսքը գնում է ոչ պոպուլյար հայացքների կամ փոքրամասնությունների մասին, քանի որ մեծ է նրանց իրավունքների ոտնահարման հնարավորությունը:

Դատարանն արձանագրել է կոնվենցիայի 11-րդ և 13-րդ հոդվածների խախտում՝ 14-րդ հոդվածի համակցությամբ:

**❖ Խտրականություն աշխատավայրում.**

Սմիթն ու Գրեդին ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով երկու դիմումատուներն էլ տարբեր ժամանակահատվածներում պայմանագիր են կնքել Մեծ Բրիտանիայի ռազմա-օդային ուժերի հետ: Նրանք ունեցել են նույնասեռական կողմնորոշում: Այդ

հանգամանքը ռազմա-օդային ուժերի ղեկավարությանը հայտնի դառնալուց հետո, դիմումատուները՝ չնայած դրական ծառայողական բնութագրին, անհապաղ ազատվել են աշխատանքից:

Դատարանը եկել է այն եզրակացության, որ միայն նույնասեռական կողմնորոշման հիմքով աշխատանքից ազատելը, հանդիսանում է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի խախտում, և որ բացակայել է դիմումատուների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները (ՄԻԵԿ 13 հոդված):

Դատարանն արձանագրել է կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածների խախտում:

### ❖ **Նույնասեռ զուգընկերների միջև հարաբերություններ.**

Պ.Բ-ն և Ջ.Ս.-ն ընդդեմ Ավստրիայի գործով դիմումատուներն հանդիսացել են նույնասեռ զուգընկերներ: Նրանք բողոքում են նրա համար, որ Ավստրիայի օրենսդրությունը թույլ չի տալիս երկարաձգել մի զուգընկերոջ բժշկական ապահովագրությունը մյուս զուգընկերոջ վրա՝ հիվանդության կամ դժբախտ պատահարի դեպքում:

2006թ.-ին օրենսդրությունը փոփոխվել է և թույլատրվել է երկարաձգել մի զուգընկերոջ բժշկական ապահովագրությունը մյուս զուգընկերոջ վրա՝ համատեղ դաստիարակման տակ երեխա ունենալու դեպքում:

Դատարանը, հաշվի առնելով սոցիալական և իրավական փոփոխությունները, հաստատեց, որ նույնասեռ ամուսինների միջև հարաբերություններն ընկնում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի գործողության ոլորտի մեջ՝ վերաբերվող ընտանեկան կյանքին վերաբերող:

Այսպիսով, զեկույցում ներկայացված խնդիրները կմնան ակտուալ և մտահոգիչ դեռևս այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանի Հանրապետությունում չի ընդունվել «Խտրականությունն արգելող» օրենք, չեն կատարվել համապատասխան փոփոխություններ ՀՀ Զրեական (*քրեական պատասխանատվության նախատեսում ոչ միայն ազգային, ռասայական կամ կրոնական, այլ նաև խտրականության բոլոր հիմքերով թշնամանք հարուցելու համար*) և Զաղաքացիական (*ոչ միայն վիրավորանքի և զրպարտության, այլև ատելության խոսքի հիմքով ևս անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգի և պայմանների սահմանում*) օրենսգրքերում:

Դա կհանգեցնի Էական փոփոխությունների, քանզի համապատասխան նորմերի ու սանկցիաների առկայության պարագայում յուրաքանչյուր ոք իր գործողություններում կաշկանդված կլինի օրենքով և երկրի ընդհանուր մթնոլորտը կձևավորի հասարակական գիտակցության այլ հարթություն:



## Ամփոփում

---

Հայաստանի Հանրապետության իրավական վիճակի համապարփակ բնութագիր է հանդիսանում պետության ներսում մարդու և քաղաքացու իրավական բնութագիրը: Այն իրենից ներկայացնում է մարդու իրավունքների նկատմամբ հարգանք, հանդուրժողականություն, զսպվածություն, մարդու կողմից իր իրավունքների ազատ իրականացում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ողջամիտ սահմանափակում:

Մարդու արժանապատվությունը բարձրագույն արժեք է, որի ճանաչումը, հարգումը, պահպանումն ու ապահովումը պետության հիմնական գործառույթներից և պարտականություններից մեկն է, սակայն 2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2017թ.-ի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած՝ սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված մարդու իրավունքների խախտման դեպքերը վկայում են այն մասին, որ ՀՀ-ում այդ ինստիտուտը դեռևս անկատար վիճակում է:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում դեռևս չկա «խտրականությունն արգելող» օրենսդրություն, այնուամենայնիվ ՀՀ-ն վավերացրել է խտրականության վերաբերյալ նորմեր պարունակող այնպիսի միջազգային փաստաթղթեր, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան (հոդված 14), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (հոդված 26), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան և այլն:

ՀՀ Սահմանադրությամբ սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Չնայած պետության ստանձնած միջազգային պարտավորություններին, ՀՀ-ում շարունակվում են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով պայմանավորված խտրականության դրսևորման դեպքերը:

2017թ.-ի մայիսի 17-ին տեղի ունեցած «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի» միջազգային օրվան նվիրված ակցիան առիթ հանդիսացավ ևս մեկ անգամ բախվելու LQFSHԷ+ անձանց նկատմամբ հասարակության ճնշող մեծամասնության անբարյացակամ վերաբերմունքին:

Ուշագրավն այն է, որ խտրական վերաբերմունքը դրսևորվել է ինչպե՛ս քաղաքացիների, այնպե՛ս էլ օրինապահ մարմինների աշխատակիցների կողմից, ովքեր

չեն կատարել իրենց վրա օրենքով դրված պարտականությունները և անգործություն են ցուցաբերել քաղաքացիների կողմից՝ ակցիայի մասնակիցների գործունեությանը խոչընդոտելու հարցում:

Ակցիայի ընթացքում ՉԼՄ ներկայացուցիչը՝ հակառակ ակցիայի մասնակցի ցանկության, շարունակաբար լուսանկարել ու տեսանկարահանել է նրան՝ չպահպանելով լրագրողական էթիկան:

Լրագրողները պարտավոր են հարգել քաղաքացիների խնդրանքը՝ չհրապարակելու իրենց անունը, լուսանկարը, տեղեկատվության աղբյուրը, մասնավոր զրույցում իրենց հայտնած տեղեկությունը: Պետք է չհրապարակեն մարդկանց մասնավոր կյանքի մասին տեղեկություններ, հարգեն մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը:

Նրանք չպետք է լուրի և ռեպորտաժի մեջ ներդնեն սեփական դատողություններն ու էմոցիաները և պետք է սեփական մեկնաբանություններում զերծ մնան վիրավորանքներից, որակումներից ու պիտակավորումներից:

Անձնական տվյալների պաշտպանության երաշխիքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածում:

Ակցիայի մասնակիցներն ակցիան կազմակերպելիս և անցկացնելիս պահպանել են օրենքի համապատասխան դրույթների պահանջները:

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածին համապատասխան, եթե կազմակերպչի հիմնավոր կարծիքով հավաքին մասնակցելու է ոչ ավելի, քան 100 մասնակից, ապա իրազեկում ներկայացնելը պարտադիր չէ:

Նույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված է ոստիկանության պարտականությունները հավաքի ընթացքում: Մասնավորապես՝ ոստիկանությունը պարտավոր է հավաքի մասին տեղեկատվություն ստանալուց հետո անհապաղ նշանակել իր ներկայացուցչին և այդ մասին հայտնել կազմակերպչին ու լիազոր մարմնին, պարտավոր է ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը հավաքին, պարտավոր է հավաքի անցկացման վայրից հեռացնել այն անձանց, ովքեր կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը, եթե այլ կերպ հնարավոր չէ ապահովել այն:

Ակցիային հաջորդեց «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի» միջազգային օրվան նվիրված քննարկումը, որը նույնպես հայտնվեց լրատվամիջոցների և քաղաքացիների ուշադրության կենտրոնում ու արժանացավ բազմաթիվ քննադատությունների:

Քննադատություններ և ատելության կոչեր հնչեցնելիս յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ի նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությամբ երաշխավորվում է կարծիքի արտահայտման ազատությունը: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Հայաստանում «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի» միջազգային օրվան նվիրված ակցիային միացել էր նաև Մեծ Բրիտանիայի դեսպանատունը, որի շենքին մայիսի 17-ին ծածանվում էր նաև LQAPSHԷ+ բազմերանգ դրոշը:

Այս իրադարձությունը լայն բողոքի ալիք բարձրացրեց հասարակության և հատկապես «Հանուն օրենքի» հասարակական շարժման անդամների շրջանում: Վերջիններս իրենց կողմից կազմակերպված ակցիայի և ասուլիսի ընթացքում շեշտադրել են հատկապես այն հանգամանքը, որ Մեծ Բրիտանիայի արարքը հակասում է 1961թ.-ի ապրիլի 18-ին ընդունված Դիվանագիտական կապերի մասին Վիեննայի կոնվենցիային:

Սակայն տեղի ունեցածը, որպես Դիվանագիտական կապերի մասին Վիեննայի կոնվենցիայի խախտում որակելու համար, նախ և առաջ անհրաժեշտ է կատարել Կոնվենցիայի վերաբերելի դրույթների մանրամասն վերլուծություն:

Այսպիսով, Դիվանագիտական կապերի մասին Վիեննայի կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է, որ առանց վնասելու իրենց արտոնություններին և իմունիտետներին, այդ արտոնություններից և իմունիտետներից օգտվող բոլոր անձիք պարտավոր են հարգել նստավայր պետության օրենքներն ու որոշումները:

Նրանք նաև պարտավոր են չմիջամտել այդ պետության ներքին գործերին:

Ներկայացուցչության շենքերը չպետք է օգտագործվեն ներկայացուցչության այն ֆունկցիաների հետ անհամատեղելի նպատակներով, որոնք նախատեսված են սույն կոնվենցիայով կամ միջազգային իրավունքի այլ նորմերով, կամ էլ որևէ հատուկ համաձայնագրերով, որոնք գործում են հավատարմագրող պետության և նստավայր պետության միջև:

Կոնվենցիայի 47-րդ հոդվածով սահմանվում է, որ Կոնվենցիայի դրույթները կիրառելիս նստավայր պետությունը չպետք է խտրականություն վարի պետությունների միջև: Սակայն չի համարվում, որ տեղի է ունեցել խտրականություն՝

ա) եթե նստավայր պետությունը սույն կոնվենցիայի դրույթներից որևէ մեկը կիրառում է սահմանափակ ձևով, նկատի ունենալով իր ներկայացուցչության նկատմամբ հավատարմագրած պետության մեջ այդ դրույթի սահմանափակման կիրառումը:

բ) եթե սովորույթի բերումով կամ համաձայնագրով պետությունները միմյանց հատկացնում են առավել նպաստավոր ռեժիմ, քան այն, ինչ պահանջվում է սույն Կոնվենցիայի դրույթներով:

Կոնվենցիայի հոդվածների բովանդակությունից հետևում է, որ չկա հստակ սահմանափակում, որը կարգելի Մեծ Բրիտանիայի դեսպանատանը՝ իր տարածքում ծածանել LԳԲՏԻԶ+ անձանց դրոշը, քանզի մեր երկրում բացակայում է այնպիսի օրենքների ու որոշումների առկայությունը, որոնք կարգելեն LԳԲՏԻԶ+ քարոզը:

2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2017թ.-ի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած՝ սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված մարդու իրավունքների խախտման դեպքերն արտացոլում են խտրականության ակնհայտ դրսևորումները:

Դեպքերից մեկում Խևամակալության և հոգաբարձության հանձնաժողովը երեխայի խնամքի և բնակության վայրը որոշելու գործընթացում երեխայի հոր նկատմամբ ցուցաբերել է տարբերակված մոտեցում՝ հիմք ընդունելով նրա նույնասեռական լինելու հանգամանքը: Երեխայի հայրը տվյալ իրավիճակում կարող էր հարցը կարգավորել դատական կարգով՝ հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածը սահմանում է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրույթունը և այլն):

Ինչպես երևում է հոդվածի վերլուծությունից, երեխային ծնողներից որևէ մեկին հանձնելու հարցում Եական նշանակություն ունեցող հանգամանքները բազմաթիվ են և չեն սահմանափակվում միայն ծնողի բարոյական հատկանիշով:

Տեղի ունեցած դեպքերից մի քանիսում խտրականությունը դրսևորվել էր բժշկական հաստատությունների աշխատակիցների կողմից, ովքեր հիմք ընդունելով անձի սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը՝ հրաժարվել էին բժշկական օգնություն տրամադրելուց, կամ այն տրամադրել էին թերի և անորակ:

Մինչդեռ, ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված է, որ յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Դեռ ավելին, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության ( ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդված):

Քրեական պատասխանատվություն (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 308՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, հոդված 309՝ պաշտոնեական լիազորություններն անցնելը) է նախատեսվում նաև ՀՀ ոստիկանության ներկայացուցիչների համար այն դեպքերում, երբ վերջիններս LԳԲՏԻԶ+ անձանց նկատմամբ իրենց պարտականությունները կատարելիս գործադրել են անհամաչափ ուժ:

Ոստիկանության ծառայողի, դասակի կամ ստորաբաժանման անհամաչափ գործողությունները կարող են կտրուկ սրել իրավիճակը և հանգեցնել միջադեպի անսպասելի բարդացմանը: Այս իմաստով՝ որոշակի իրադրություններում ոստիկանության յուրաքանչյուր ծառայող պետք է ձեռնպահ մնա անհատական գործողություններից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է ինքնապաշտպանության համար:





**«ՆՈՐ ՍԵՂՈՆԴ» «NEW GENERATION»  
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ HUMANITARIAN NGO**

Էլ-հասցե: [newgenerationngo@gmail.com](mailto:newgenerationngo@gmail.com) | <http://ngngo.net/>